

«Ա.Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների
պաշտպանության հայկական կենտրոն»

The A. D. Sakharov Armenian Human Rights Protection Centre



ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՓԵՏՐՎԱՐ

2021 թ.

Գորիս

02.02.2021

**Խոզնավար. Սուրեն Ալավերդյանի տունը հրո ճարակ է դարձել. ընտանիքը նոր
բնակարան ունենալու խնդրի առաջ է կանգնած**

Սույն թվականի հունվարի 21 ին հրդեհ է բռնկվել Սյունիքի մարզի Տեղ համայնքի՝ սահմանամերձ դարձած Խոզնավար գյուղի բնակիչ Սուրեն Ալավերդյանի բնակելի տանը:

Ըստ ԱԻՆ-ի ուսումնասիրության՝ հրդեհն առաջացել է տանիքով անցնող էլեկտրալարերի կարճ միացումից:

Հրդեհն այնքան արագ է տարածվել, որ տնից ոչինչ չեն կարողացել փրկել:

Ընտանիքը հայտնվել է դրսում՝ զրկվելով գույքից, փաստաթղթերից, ձմեռվա համար պաշարած ողջ սննդից:

Ընտանիքի երեք երեխան էլ զրկվել են հագուստից, դպրոցական պարագաներից:

Ընտանիքը ժամանակավորապես հանգրվանել է հարազատների տանը:

Խոզնավարցիներն ակնկալում են, որ հնարավորինս կարճ ժամանակամիջոցում եւ պետական մակարդակով կլուծվի տուժած ընտանիքին բնակարանով ապահովելու խնդիրը:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/khoznavar-suren-alaverdyani-tuny-hro-charak-e-dardzel-yntaniqy-nor-bnakaran-unenalu-khndri-araj-e-kangnats>

03.02.2021

**Փոխգնդապետն ու պահեստագորայինը վիճել են, 31-ամյա կապիտանը միջամտել
է ու սպանվել. ողբերգական դեպք՝ Գորիսում**

Գորիս քաղաքում նոյեմբերի 29-ին՝ ժամը 20:30-ի սահմաններում ողբերգական դեպք է ունեցել. սպանվել է 31-ամյա կապիտան Վահե Մկրտչյանը:

NEWS.am-ի հետ զրույցում Վահե Մկրտչյանի կինը՝ Նորա Հարությունյանը, պատմեց, թե ինչպես է դեպքը տեղի ունեցել.

«Նոյեմբերի 29-ին, երեկոյան՝ 20:30-ի սահմաններում փոխգնդապետ Արտակ Մանուչարյանն իր վարորդ՝ պահեստագորային Արտակ Խարտիսայանի հետ ունեցել է վիճաբանություն: Նշեմ, որ պահեստագորայինը եղել է ոչ սթափ վիճակում, որը հաստատվել է նաեւ փորձաքննությամբ: Նրանք միմյանց ուղղությամբ զենք են պահել, որը տեսնելով ամուսինս, միջամտել է, արդյունքում նրանցից մեկը, դեռեւս անհայտ է որ մեկը, մահացու հրազենային վնասվածք է հասցրել ամուսնուս: Մինչեւ հասցրել են հիվանդանոց, ամուսինս արդեն մահացած է եղել»:

Նորա Հարությունյանը պատմեց, որ ամուսինն առաջին օրվանից պատերազմի թեժ կետերում է եղել, կատարել է լուրջ մարտական առաջադրանքներ, պատերազմից եկել է տուն ու մեկնել Գորիս. «Եղել են դեպքեր, երբ ընկել է շրջափակման մեջ, սակայն կարողացել է դուրս գալ շրջափակումից: Մեծ դժվարություններ տեսնելով՝ ի վերջո ողջ է մնացել, եկել է պատերազմից տուն: Իրեն ուղարկել են պաշտոնի բարձրացման: Ամուսինս ծառայել է Էջմիածնի N զորամասում, սակրավոր է եղել,

հետո իրեն ուղարկել են Բալահովիտ, այնտեղի գնդի հետ տարել են Գորիս՝ մարտական հերթապահություն իրականացնելու: Այնտեղ 10 օր մնալուց հետո էլ տեղի է ունեցել այդ ողբերգական դեպքը»:

Կինն ասաց, որ ունեն 2 տղա երեխա. Մեկը՝ 7 տարեկան, մյուսը՝ 1 տարեկան:

Կապիտանի կինը պատմեց, որ պահեստագորայինը դեպքից հետո կալանավորվել էր, սակայն երեկ իրենց հայտնի է դարձել, որ արդեն ազատության մեջ է. «Անցել է 2 ամիս եւ մի քանի օր առաջ պարզվեց, որ ազատ են արձակել՝ բավարար ապացույցներ չունենալու պատճառով: Փոխգնդապետին ընդհանարապես չէին կալանավորել: Մեկը մյուսի վրա է գցում, հերքում են, որ իրենք կապ ունեն այդ սպանության հետ: Հիմա նրանցից մեկը հանցագործ է, բայց երկուսն էլ ազատության մեջ են: Ամենացավալին այն է, որ նրանք ազատության մեջ են, իսկ ամուսինս չկա: Ամենաթեթեւ բանը մեկնաբանում ու դարձնում են հերոս, իսկ ամուսինս ամենածանր տեղերում մարտեր է ունեցել, եկել է պատերազմից ու սպանվել, ու դեռ այս դեպքում անգամ չեն անդրադառնում»:

Աղբյուրը՝ <https://news.am/arm/news/626936.html>

04.02.2021

Սյունիքի մարզի Շուռնուխ և Որոտան բնակավայրերում գտնվող բնակելի անշարժ գույքը պատերազմի հետևանքով կորցրած քաղաքացիները կստանան աջակցություն

Սյունիքի մարզի Շուռնուխ և Որոտան բնակավայրերում գտնվող բնակելի անշարժ գույքը 2020 թ. պատերազմի հետևանքով կորցրած քաղաքացիները կստանան միանվագ 300,000 դրամ և ամսական 68,000 դրամ աջակցություն (6 ամսվա համար): Նախագիծն այսօր հաստատվել է Կառավարության կողմից:

Միջոցառման շահառու են նաև անչափահաս երեխաները, որոնց հասանելիք դրամական օգնությունը կտրամադրվի ծնողին կամ խնամակալին:

Ֆինանսական աջակցությունն ստանալու համար դիմում գրելու անհրաժեշտություն չկա. օգնությունը կտրամադրվի շահառուների՝ Սյունիքի մարզպետարանից ստացված տվյալների հիման վրա:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը շահառուների ցանկը ստանալուց հետո՝ կձևավորի վճարման ցուցակ և գումարը կփոխանցի շահառուի բանկային հաշվին:

Աղբյուրը՝ [https://ru-ru.facebook.com/ArmenianUnifiedInfoCenter/posts/889738568528738/](https://ru.ru.facebook.com/ArmenianUnifiedInfoCenter/posts/889738568528738/)

05.02.2021

Շուռնուխում 11 նոր տուն կկառուցվի

Սյունիքի մարզի Շուռնուխ գյուղում կմեկնարկի «Նոր Վերին թաղեր» թաղամասի շինարարությունը: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին հայտնում է Հայկական միասնական տեղեկատվական կենտրոնը:

«Շուտնուխում շուտով կմեկնարկի «Նոր Վերին թաղերի» շինարարությունը. 11 տուն կկառուցվի: Մինչև այդ՝ Շուտնուխում և Որոտանում անշարժ գույքը կորցրած բնակիչները միանվագ 300,000 դրամ ստանան. ևս կես տարի էլ ամսական 68,000 դրամ աջակցություն է նախատեսված», - ասված է հաղորդագրությունում:

Շուտնուխում և Որոտանում անշարժ գույքը կորցրած բնակիչներին աջակցության ծրագրի շահառու են նաև անչափահասները:

Աղբյուրը՝ <https://armenpress.am/arm/news/1042552.html>

06.02.2021

Աղբբեջանցիներն այսօր սաղրանքի են դիմել՝ Կապան-Ճակատեն հատվածում

ArmDaily.am-ի հետ զրույցում Կապանի խոշորացված համայնքի համայնքապետ Գևորգ Փարսյանը տեղեկացրեց, որ միջադեպը տեղի է ունեցել Կապան-Ճակատեն ճանապարհահատվածում:

«Ամեն ինչ սկսվել է «Բարի գալուստ Աղբբեջան» ցուցանակի վրա կրակելուց: Աղբբեջանցիներն էլ օգտագործելով առիթը սաղրանքի են դիմել ու դիրքային փոփոխություն են կատարել: Ռուս խաղաղապահներն էլ են կոնֆլիկտ ունեցել աղբբեջանցի զինվորականների հետ ու նրանց նոր դիրքի առաջ իրենք էլ են հաստատվել՝ բացառելու համար աղբբեջանցիների նոր դիրքային փոփոխությունները», - տեղեկացրեց Գևորգ Փարսյանը:

Կապանի քաղաքապետը նշեց, որ ԲՏՌ տեսակի մեքենայով ոչ թե աղբբեջանցիները, այլ ռուս խաղաղապահներն էին այսօր փակել ճանապարհը, որպեսզի աղբբեջանցիների առաջխաղացումը կանխեն: Այս պահին ճանապարհը անխափան գործում է ու ռուս խաղաղապահները տիրապետում են իրավիճակին:

Աղբյուրը՝

<https://armdaily.am/?p=125588&l=am%2F&fbclid=IwAR0TsmwieVrBgO1pYyFXxY77FwDXu7PA1UqrgM7j7A-hdkd-RIn3CsL7T08>

06.02.2021

Ներքին Խնձորեսկի տարածքը պաշարված ամրոց է հիշեցնում

Վերջին երեք օրում մեր լրատվական դաշտում ու հասարակական-քաղաքական կյանքում ամենաաղմկահարույց թեման, անշուշտ, Ներքին Խնձորեսկի մատույցներում դիրքավորված հայկական հենակետերից մեկի հետքաշումն է...

«Սյունյաց երկրի» ստեղծագործական խումբն այսօր Գորիս-Կուբաթլի սահմանագլխին գտնվող Ներքին Խնձորեսկի մարտական դիրքերում էր. նպատակ ունեինք տեղում ծանոթանալ իրավիճակին, քանզի մայրաքաղաքային հարթակներից ամեն մեկը յուրովի է ներկայացնում տեղի ունեցածը...

Ցավոք, անհերքելի է տարածված տեղեկատվությունն առ այն, որ հայկական հենակետերից մեկը թուրք-ազերիների պահանջով հետ է քաշվել: Այդ հենակետը հիմա նոր դիրքում է՝ նախկին տեղից մոտ հարյուր մետր դեպի հյուսիս (դեպի ներս):

Առաջին հայացքից կամ առերեսույթ աննշան տարածք է թողնվել թշնամուն, սակայն հայրենիքը սրբազան տարածք է, ուստի եւ ամեն մի մետրը չափազանց մեծ նշանակություն ունի:

Եվ ուրեմն՝ իրողությունը ցավալի է ու երիցս դատապարտելի:

Բայց այդ միջադեպն ավելի վիրավորական ու ցավալի է դառնում, երբ իմանում ենք, որ հայկական ու ադրբեջանական երկու՝ գրեթե դեմ դիմաց գտնվող (իրարից մեկ ձորով բաժանվող) հենակետերի միջև վերստին սահմանորոշում է կատարվել մեզ հայտնի մեխանիկական-ծաղրական եղանակով՝ GPS-ով:

Տեղացիները պատմում են, թե Կուբաթլիի տարածքի ադրբեջանական զորքերի հրամանատարը պետական սահմանի այդ հատվածը վերաճշտելու հրաման է արձակել այն բանից հետո, երբ հայկական կողմը համարձակվել է երկու-երեք օրով ուշացնել Տեղ գյուղի սահմանամերձում ձերբակալված ադրբեջանցի երկու սահմանախախտի վերադարձը (հանձնումը)...

Պատմում են նաեւ, թե ինչպես է ադրբեջանցի զինվորականը «սահմանորոշման» ժամանակ պայքարել նույնիսկ վերջին մեկ մետրի համար...

Ի դեպ, Ներքին Խնձորեսկից համարյա տեսանելի են դեպի արեւելք ու հարավ տարածվող հայկական ու ադրբեջանական հենակետերը (շատ դեպքերում՝ միմյանց դեմ հանդիման), որոնցում, բնականաբար, ծածանվում են իրենց երկրների դրոշները:

Հայկական դիրքերին մոտենալիս ականատես եղանք բազմաթիվ խրամատների ու պաշտպանական ամրությունների, որոնք յուրօրինակ վկայությունն են այն ամենի, թե մինչեւ 2020 թվականի նոյեմբերի 9-ը ինչպիսի եռանդով էինք պատրաստվել Սյունիքի արեւելյան սահմանների պաշտպանությանը:

Ոչ սովորական այդ միջավայրում, սակայն, ուժ առանք եւ հպարտություն ապրեցինք, երբ հանդիպեցինք մարտական դիրքերում վեհանձնորեն կանգնած հայոց զինվորներին, երբ տեսանք, թե Խնձորեսկի բնակիչներից շատերն ինչպիսի գորովանքով են շրջապատում հայոց սահմանները պաշտպանող մեր որդիներին: Ու երիցս համոզվեցինք, որ Սյունյաց աշխարհի վերստին սրբագործված հողը չի կարող երբեւէ պղծվել որեւէ ուրացողի կողմից:

Իսկ երբ շրջեցինք Ներքին Խնձորեսկ գյուղում... Հպարտություն ապրեցինք՝ տեսնելով, որ սահմանապահ գյուղը զբաղված է իր առօրյայով, կարծեք մայրաքաղաքային հարթակներից հնչող աղմուկն իրենց մասին չէ:

Եվ ուրեմն... Նվաստացված Հայաստանի նոր հառնումը կարող է տեղի ունենալ բացառապես հզոր Սյունիքով, որի արեւելյան սահմաններից էլ սկսում է Հայաստանի Հանրապետությունը: Ուրիշ ճանապարհ չունենք, եւ դա պետք է հասկանան այսօրվա ու վաղվա բոլոր կառավարիչները, դա պետք է գիտակցի ամեն մի հայ...

Հ.Գ.

Փաստորեն թուրք-ազերի հրամանատարը զայրացել է եւ կարգադրել պետական սահմանի որոշ հատվածում սրբազրումներ կատարել...

Մյուս կողմից՝ հայկական գյուղի ոչխարի երկու հոտը (հովիվներով) այն տարածքներում էին, որ հիմա ադրբեջանական են կոչվում, այն էլ՝ թշնամու մարտական դիրքերի սեւեռուն հայացքի ներքո...

Մտրակի եւ բլիթի այդ գործելակերպը նոր տարակույսներ առաջացրեց մեզանում, թեւս ոմանք փորձում էին դրական գույներ հաղորդել այդ ամենին:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/nerqin-khndzoreski-taratsgy-pasharvats-amrots-e-hishetsnum>

07.02.2021

Խոզնավար. գյուղն արժանապատվորեն է կատարում սահմանապահի իր առաքելությունը, մնում է՝ պետությունը մտահոգվի գյուղի խնդիրներով

Մյունիքի համար ոչ սովորական ժամանակները յուրօրինակ աշխատանք եւ ուրիշ են հաղորդել շատերիս, այդ թվում՝ նորանշանակ մարզպետին:

Մելիքսեթ Պողոսյանը պարբերաբար լինում է սահմանապահ բնակավայրերում՝ հիմնախնդիրներին տեղում ծանոթանալու եւ դրանցից բխող քայլեր ձեռնարկելու նպատակով:

Փետրվարի 7-ին նա Խոզնավար գյուղում էր՝ Տեղ համայնքի ղեկավար Ներսես Շադունցի ուղեկցությամբ:

Երեք կողմից ադրբեջանական մարտական դիրքերով շրջապատված այդ բնակավայրն իր հոգսերով ու մտահոգություններով գրեթե նման է մարզի արեւելյան սահմանագլխի մյուս գյուղերին:

Պատահական չէ, որ գյուղամիջում հավաքված խոզնավարցիներին, որ եկել էին մարզպետի հետ հանդիպման, նախաւառաջ հետաքրքրում էին՝ ի վերջո ե՞րբ է պետական մակարդակով եւ ճշգրտորեն կատարվելու սահմանորոշում, ե՞րբ է գյուղի մերձակայքով ձգվող սահմանը լիարժեքորեն անցնելու Հայաստանի ուժային կառույցների հսկողության ներքո:

Մարդիկ դրական են վերաբերում Գորիսի տարածաշրջանում պայմանագրային գումարտակ ձեւավորելու նախաձեռնությանը: Դա հնարավորություն կտա, որ գյուղաբնակներն օրինական ձեւով մասնակցություն ունենան բնակավայրի սահմանների պաշտպանությանը: Սակայն սահմանված տարիքային շեմը՝ մինչեւ 42 տարեկան, թույլ չի տալիս, որ գյուղի ամբողջ ներուժն օգտագործվի այդ նպատակով:

Մինչ այդ, սակայն, պետք է լուծել գյուղ մտնող խմելու ջրի ակունքների անվտանգության ապահովման խնդիրը: Խոզնավարը խմելու ջուր է ստանում Մեւ լճից ներքեւ գտնվող ջրակունքներից, որը շատ մոտ է Ադրբեջանին եւ չի վերահսկվում մեր կողմից: Ուստի եւ՝ հնարավոր վտանգներից խուսափելու համար անհրաժեշտ է այնտեղ մարտական հերթապահություն կազմակերպել:

Հրատապ է նաև դեպի Ծիծեռնավանք տանող ճանապարհի ուղղությամբ (աղբբեջանական Քյոսալար եւ Հաջիլար գյուղերի տարածքների հարեւանությամբ) մարտական հենակետերի կազմակերպումը, ինչը հնարավորություն կտա վստահորեն օգտագործել գյուղին պատկանող արոտավայրերն ու խոտհարքները:

Խոզնավարցիներին մտահոգում է Գորիս-Խոզնավար ավտոմայրուղու Խնածախ-Խոզնավար հատվածի անմխիթար վիճակը, ինչպես եւ Վերիշեն-Վաղատուր՝ համեմատաբար կարճ ճանապարհի գրեթե քանդված վիճակը, իսկ ձյունառատ օրերին՝ անանցանելի դրությունը:

Խոզնավարի տնտեսության մեջ գերակշռող տեղ ունի անասնապահությունը: Ընդ որում՝ վերջին մեկ տարում աճել է ե՛ւ խոշոր, ե՛ւ մանր եղջերավոր անասունների քանակը: Մինչդեռ նոր իրավիճակում անասնապահներն արոտավայրերի խնդրի առաջ են կանգնած: Դա նկատելի է այսօր՝ մուրային շրջանում, իսկ ավելի սաստիկ է զգացվելու ամառային շրջանում: Մելիքսեթ Պողոսյանի կարծիքով՝ այժմվանից պետք է մտածել Սեւ լճի մերձակայքում կամ Մեծ Իշխանասարի ստորոտում գտնվող ամառային հարուստ արոտավայրերի արդյունավետ օգտագործման մասին:

Անասնապահությունը կանգնած է մեկ ուրիշ խնդրի առջեւ եւս. գրեթե ձախողված է անասնաբուժական ծառայությունը: Համայնքի ղեկավար Ներսես Շադունցի հավաստմամբ՝ «Եթե տարիներ առաջ 12 հիվանդության համար կար պետական պատվեր, հիմա պետպատվերը գործում է հինգ հիվանդության համար, ինչն ավելի ռիսկային է դարձնում անասնապահությունը»: Ըստ համայնքապետի՝ անասնաբուժական ծառայության ներկա կերպը պետք է արմատապես փոխվի եւ հնարավորինս արագ:

Գյուղացիները կարգավորված չեն համարում նաև անասունների մթերման հարցը:

Գյուղացիները դժգոհություն հայտնեցին կադաստրային ծառայությունում տիրող բյուրոկրատական քաշքշուկների վիճակի առիթով: 1992 թվականից մինչեւ հիմա գյուղացիների մեծ մասը չի կարողանում ստանալ իրենց իսկ պատկանող տների, այլ շինությունների եւ հողամասերի սեփականության վկայականները: Չափագրումների համար պահանջվող ոչ համաչափ գումարների պատճառով գյուղացիները չեն կարողանում իրականացնել պահանջվող չափագրումները:

Խոզնավարում քիչ չեն նաև սոցիալական խնդիրները: Նախադպրոցական տարիքի 24 երեխա ունեցող գյուղը չունի նախակրթարան: Երբեմնի ակումբը, որ գյուղացիների հավաքատեղի է հատկապես ձմռան ամիսներին, տարիներ շարունակ որեւէ աշխատող չունի, եւ պահպանվում ու օգտագործվում է երբեմնի ակումբավար Արամ Բաղդասարյանի անձնական ջանքերով:

Մելիքսեթ Պողոսյանն այցելեց Սուրեն Ալավերդյանի՝ հրո ճարակ դարձած բնակարան: Հունվարի 21-ի հրդեհից հետո այդ ընտանիքը բնակվում է հարազատների տանը: Եվ մարգպետն ու համայնքապետը քննարկեցին տուժած ընտանիքին բնակարանով ապահովելու խնդիրը:

Սյունիքի շուրջ ստեղծված ռազմաքաղաքական նոր իրավիճակում վտանգվել են նաև մեր լեռնաշխարհի գրչության հնամենի կենտրոն Խոզնավարի որոշ սրբավայրեր: Մասնավորապես վտանգված է Շոնաղի խաչքարերի ճակատագիրը: Գյուղից մոտ 3-4 կմ հեռավորության վրա գտնվող Ծիծեռնավանք տանող ճանապարհի վրա են գտնվում խաչքարերը: Ըստ խոզնավարցիների՝ խորհրդային ժամանակներում այդ վայրը մտնում էր Խոզնավարի տարածքի մեջ, իսկ հիմա ադրբեջանցիներն իրենցն են համարում: Եվ մերձակայքում կազմակերպված ադրբեջանական մարտական հենակետն այլևս անհնար է դարձրել հավատավորների այցը Շոնաղի սրբավայր:

Սահմանագծի վրա է հայտնվել նաև հազարամյակների պատմություն ունեցող բացառիկ վիշապաքարը, որի ճակատագիրը նույնպես անորոշ է:

Մարզպետի հետ խոզնավարցիների հանդիպման ժամանակ արծարծվեցին բազմաթիվ այլ հարցեր էս:

Մելիքսեթ Պողոսյանը հավաստիացրեց՝ հանգամանալից ուսումնասիրել բարձրացված հարցերը եւ փորձել լուծում տալ դրանց: Ընդ որում՝ փետրվարի 8-ին Տեղ գյուղում կկայանա Սյունիքի հարցերով մինչգերատեսչական աշխատանքային խմբի հերթական նիստը, որտեղ էլ քննարկման առարկա կդառնան խոզնավարցիների բարձրացրած որոշ հարցեր էս:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/khoznavar-gyukhn-arzhanapatvoren-e-katarum-sahmanapahi-ir-araqelutyuny-mnum-e-petutyuny-mtahogvi-gyukhi-khndirnerov>

08.02.2021

Քաջարան անկախ պետությունը եւ Հայաստան պետությունը, որ իբր մենամարտում են միմյանց դեմ, իրականում միասին են Սյունիքում պատերազմում խոսքի ազատության դեմ

Աշխարհում տեղի ունեցող բոլոր պատերազմները մի օր, ի վերջո, ավարտվում են. վերջին հազար տարվա օրինակներն ասեմք... Չի դադարում սակայն Քաջարանի կողմից «Սյունյաց երկրին» հայտարարված պատերազմը, որի դատական դրսեւորումները շարունակվում են չորս տարի շարունակ, ընդ որում՝ չտեսնված, չլսված խարդախություններով, խարդավանքներով, կեղծիքներով...

Անգամ համաճարակի օրերին, երբ երկրի հասարակական-քաղաքական ընթացքը, տնտեսությունը կազմալուծված վիճակում էին, երբ ամբողջ բնակչության կյանքը վտանգված էր, մենք գրեթե ամեն շաբաթ դատական նիստի էինք: Նույնիսկ պատերազմական օրերին, երբ օրական հարյուրավոր հայ հերոսներ էին նահատակվում, երբ Արցախի, նաև Սյունիքի լինել-չլինելու հարցն էր օրակարգում, Սյունիքի մարզային միակ լրատվամիջոցը՝ «Սյունյաց երկիրը», գրեթե ամեն օր դատարաններից ծանուցագրեր էր ստանում... «Սյունյաց երկիր» թերթի շուրջ ստեղծված արտառոց վիճակի մասին Հայաստանի

իշխանությունը ներկայացնող անձին՝ Նիկոլ Փաշինյանին տեղեկացրել էինք դեռևս 2020 թ. հունվարի 25-ին՝ կապանյան ասուլիսում: Նա հրապարակավ հանձնարարեց իր օգնականին՝ պարզել խմբագրի կողմից բարձրացված հարցերի իսկությունը եւ զեկուցել: Իսկ երբ ասուլիսից հետո վարչապետը հանդիպեց մարզի իրավապահ մարմինների ղեկավարներին, հարցրեց՝ իսկապե՞ս կա տեսանյութ, որի մեջ երևում է, թե ինչպես են հրկիզում խմբագրության մեքենան: Պատասխանը միանշանակ էր՝ այո: Եվ հանձնարարեց պատգամավորներից մեկին՝ հետևել գործի նախաքննությանն ու մեկ ամսվա ընթացքում զեկուցել: Թե ինչ կոնկրետ քայլեր ձեռնարկեցին վարչապետի օգնականն ու իշխանական պատգամավորը՝ տեղյակ չենք: Մինչդեռ տեղի ունեցան իրադարձություններ, որոնցից կարելի է որոշակի կռահումներ անել... Խմբագրության մեքենայի հրկիզման առիթով հարուցված քրեական գործը, որ կասեցվել ու վերաբացվել էր, կրկին կասեցվեց: Դատական կամայականությունները, որ մինչ այդ տեսնում էինք միայն ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարաններում, ավելի լկտի դրսևորումներ սկսեցին ունենալ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում: Եվ ծաղրածու ու կիսագրագետ փաստաբանն էլ դատական նիստերից մեկում հպարտորեն հայտարարեց՝ դիմեք Նիկոլին՝ որքան ուզում եք, միեւնույն է՝ Նիկոլը չի անդրադառնալու ձեր բարձրացրած հարցերին: Ի դեպ, այդ ընթացքում Քաջարանից անհետացան Հայաստանի ամենախոշոր երկու օտարերկրյա ներդնողը, իսկ Հայաստան պետությունն այդպես էլ չարձագանքեց կապիտալի նման արտառոց արտահոսքին...

Ընթերցողի ուշադրությունն ենք հրավիրում «Սյունյաց երկրի» դեմ հարուցված տասնյակ քաղաքացիական հայցերից մեկի՝ թիվ ԵԴ/12226/02/18 գործի դատավարական պատմության մի քանի հանգամանքի վրա: Իմիջիայլոց, վերջին չորս տարում դատարաններում (իբրեւ «Սյունյաց երկրի» խմբագիր) բազմաթիվ կամայականությունների ենք բախվել, բայց ներկայացվող գործի պատմությունն աննախադեպ է մի քանի առումով... Հայցվորը Քաջարանի կոմբինատի տնօրենի տեղակալ Նարեկն է՝ Ամբարյան ազգանունով:

Հայաստանի զինվորական դատախազի տեղակալի եղբայրն է, հանրապետության իրավաբանական հանրությամբ շատ թե քիչ հայտնի մարդու զավակ: Ինքը՝ Նարեկը, ժամանակին աշխատել է ՀՀ դատախազության համակարգում, բայց թե ինչ պատճառով է դուրս մնացել համակարգից, չկարողացանք ճշտել նույնիսկ մեր միջնորդություններով:

Ի դեպ, մերժվել են բոլոր միջնորդությունները, որոնցով փորձել ենք ճշտել, թե ինչ ճանապարհով է այդ տղան հայտնվել ԶՊՄԿ փոխտնօրենի պաշտոնում եւ դարձել

ընկերության

բաժնետերերից

մեկը:

...Գործը քննվում էր Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում: Դատավորը ուն Արթուր Ստեփանյանն էր՝ բացառիկ էկզոտիկ անձնավորություն. Մեր բարձրացրած բոլոր հարցերին, մեր միջնորդություններին պատասխանելուց կամ ծագող հարցերին ընթացք տալուց առաջ նախ չռած աչքերով նայում էր Նարեկին ներկայացնող երկու փաստաբանին, եւ միայն նրանց հայացքի ուղղորդմամբ էր դրական կամ բացասական պատասխան տալիս: Անկեղծ լինենք՝ այդ դատավորն ուղղակի խղճմտանք էր առաջացնում... Երեք անգամ ինքնաբացարկի միջնորդություն ներկայացրինք, բայց մերժում ստացանք:

Փորձեցինք ՀՀ արդարադատության նախարարության եւ ԲԴԽ-ի միջոցով կարգապահական վարույթ հարուցել նրա դեմ, ու այդ դատավորին ազատել տառապանքից: Սակայն պարզվեց, որ նման գործընթաց կարելի է սկսել տվյալ գործով վճիռն ուժի մեջ մտնելուց հետո: ...Դատաքննության նյութը մեր հեղինակած հոդվածն էր՝ «Քաջարան. այդպես էլ ապրում ենք». հրապարակվել էր syuniacyerkir.am կայքում 2018 թ. մայիսի 18-ին: 2020 թ. հուլիսի 7-ին Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը կայացրեց վճիռ:

89 էջից բաղկացած վճռում հաշված նախադասություններ կարելի է գտնել՝ բուն վեճին առնչվող: Հիմնականում տարբեր իրավական ակտերից արտագրած նախադասություններ են՝ տվյալ գործի հետ կապ չունեցող: Ըստ էության՝ փորձ է արվել լրջության պատրանք ստեղծել...

Վճիռը բողոքարկել ենք ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում: Պատասխանող կողմը, սակայն, չի բավարարվել նաեւ Վերաքննիչի որոշմամբ ու 2021 թ. հունվարի 20-ին վճռաբեկ բողոք է ներկայացրել բարձր դատարան:

Հայցվորի առաջին ձախողումները

Առաջին ատյանում կայացված վճիռը եւ Վերաքննիչի որոշումը, նկատենք, աննախադեպ են իրենց անբարոյականությամբ եւ անգրագիտությամբ, ակնհայտ կողմնակալությամբ եւ օրենքի պահանջների անթիվ-անհամար խախտումներով: ...Դատավարությունը սկզբից եւեթ լարված մթնոլորտում էր ընթանում. Քաջարանի կոմբինատի պատասխանատուները 15 քաղհայց էին ներկայացրել դատարան՝ ընդդեմ «Սյունյաց երկրի», այդ գործին լծել էին փաստաբանական մի ամբողջ խումբ: Նարեկի սույն գործը դրանցից մեկն էր: Նարեկը նախ կամենում էր դատավարությունն իրականացնել դոնփակության պայմաններում, որպեսզի ընթացքը երբեւէ չհանրայնացվի: Սակայն նրա ներկայացուցչի միջնորդությունն այնքան սնանկ էր ու անգրագետ, որ մեր առարկությունից հետո հրաժարվեցին դոնփակության գաղափարից ու միջնորդությունը հետ վերցրին:

Դատավարության սկզբնական փուլում ջախջախվեց Նարեկի երազանքը, թե իբր ինքն ունի գործարար համբավ ու իբր վիրավորել ենք իր գործարար համբավը: Այդ

երազը հիմնավորելու համար Նարեկի ներկայացուցիչները, չունենալով ամոթի զգացում, հայցադիմումի մեջ (մի դրվագով) Նարեկին ներկայացրել էին իբրև ԶՊՄԿ ՓԲԸ գլխավոր տնօրեն:

Մեր դիրքորոշումն այդ առումով հստակ էր. դեռևս ստալինյան օրերում ամբողջ երկրի ջանքով կառուցված, իսկ հետագայում պահպանված ու զարգացման բարձրագույն հանգրվան հասցված կոմբինատում՝ բախտի բերմամբ ու պատահմամբ զալ ու մի աշխատասենյակ զբաղեցնել եւ առանց պատշաճ փորձի զբաղվել ոչ իր մասնագիտությանը համահունչ գործառույթով, չի նշանակում, որ տղան գործարար համբավ ունի:

Այնուհետև՝ անարդյունք մնաց հայցվոր կողմի երեք տարվա չարչարանքը, որով փորձ էր արվում տվյալ հայցով պատշաճ պատասխանող ճանաչել Սամվել Ալեքսանյանին:

Հօդս ցնդեց նաև հայցվորի մեկ ուրիշ երագանք՝ հայցագնի՝ 3 մլն դրամի չափով արգելանք դնել Սամվել Ալեքսանյանի եւ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ-ի գույքի վրա: Նարեկը խմբագրից եւ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ –ից պահանջել էր 3 մլն դրամի չափով գումար՝ որպես իր անձին պատճառված ոչ նյութական վնասի նյութական փոխհատուցում, որը նույնպես մնաց երագ:

Դատարանը միայն ենթադրությամբ է հանգել եզրակացության, որ վեճի առարկա հրապարակումը վերաբերելի է Նարեկին

2018 թվականին խնդիր էր դրված՝ ամեն գնով պատժել «Սյունյաց երկրին» ու խմբագիր Սամվել Ալեքսանյանին: Եվ անհրաժեշտ էր հնարավորինս շատ հայցադիմումներ ներկայացնել դատարան: Քաջարանում, Կապանում, Գորիսում եւ Մեղրիում մրցույթ էր, թե ով կարող է ավելի շատ բողոք կամ դիմում ներկայացնել՝ ընդդեմ Սամվել Ալեքսանյանի եւ լրատվամիջոցի: Նարեկն էլ ձգտում էր հետ չմնալ եւ փորձեց արդեն ներկայացված երկու հայցադիմումին ավելացնել եւս մեկը: Պարզ չէր սակայն, թե որ մի հրապարակումը կարելի է դարձնել հերթական դատաքննության առարկա: Այդ հանգամանքի կարեւորությունը հասկանալու համար ընթերցողին հիշեցնենք՝ նմանատիպ վեճերի դատական կարգավորման համար իրավական հիմք է հանդիսանում նախեւառաջ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածը, որի 1-ին մասը սահմանում է. «Անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորել են վիրավորանքի կամ զրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան...»: Այսինքն՝ խոսքը պետք է լինի կոնկրետ անձի մասին (Ֆիզիկական կամ իրավաբանական): Այս դեպքում դատարան է դիմել Նարեկը եւ դիմել է այնպիսի մի հրապարակման առիթով, որտեղ իր անունը (վեճի առարկա արտահայտությունների մեջ) չկա... Ընթերցողին խնդրում ենք ծանոթանալ հոդվածին՝ «Քաջարան. այդպես էլ ապրում ենք»: Եվ ինքներդ կհամոզվեք, որ Նարեկն այս դեպքում այն անձը չէ, ում դեմ իբր վիրավորական կամ զրպարտող արտահայտություններ են հնչել:

Եվ երեք տարի շարունակ փորձում էինք ճշտել-պարզաբանում ստանալ՝ որքանով է վերաբերելի վիճելի հրապարակումը Նարեկին: Ու ոչ մի ապացույց, ոչ մի հիմնավորում...

Համոզվելով, որ վեճի առարկա հրապարակումը վերաբերելի չէ Նարեկին, դատավոր Արթուրը ցնորական եզրահանգում արեց՝ հրապարակման մեջ դրված է չորս լուսանկար, այդ թվում՝ Նարեկի լուսանկարը: Ուրեմն՝ հրապարակման մեջ տեղ գտած բոլոր արտահայտությունները վերաբերում են Նարեկին. եզրահանգեց դատավորը՝ մեխանիկորեն կրկնելով հայցվորին: Այդպիսով՝ դատավոր Արթուրը թքեց ոչ միայն Քաղաքացիական օրենսգրքի վերոնշյալ հոդվածի, այլև Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դատարանի բազմաթիվ որոշումներում արտացոլված դիրքորոշումների վրա, որոնցում շատ հստակ գրված է՝ անհրաժեշտ է, որ ներկայացված տվյալները լինեն հստակ վերաբերելի կոնկրետ անձի, չլինեն ենթադրական: Մինչդեռ դատարանն ամեն ինչ կառուցեց ենթադրությունների վրա, քանի որ Քաջարանն այդպես էր կամենում...

Ո՛չ Նարեկ հայցվորը, ո՛չ դատավոր Արթուրը չեն կարողացել ապացուցել, որ վեճի առարկա արտահայտություններում առկա են վիրավորանք ու զրպարտություն, բայց...

Գործող օրենսդրությունը սահմանում է այն հիմնական հատկանիշները, որոնք անհրաժեշտ են այս կամ այն արտահայտությունը վիրավորանք կամ զրպարտություն որակելու համար (հինգ հատկանիշ զրպարտության դեպքում, երեք հատկանիշ՝ վիրավորանքի): Ուստի եւ դրանց առկայությունը կամ բացակայությունը պետք է դիտարկել մի շարք նախապայմանների ամբողջական համատեքստում: Տվյալ պարագայում դատարանը հաշվի չառավ կարելորագույն հանգամանքը՝ առկա՞ են այդ չափորոշիչները, թե՞ ոչ: Եվ, այդուհանդերձ, ներկայացված արտահայտություններից վեցը համարեց զրպարտող, երկուսը՝ վիրավորական՝ քննության չառնելով դրանցից յուրաքանչյուրի պարագայում զրպարտությանը կամ վիրավորանքին բնորոշ հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը: Մինչդեռ նշված արտահայտություններից եւ ոչ մեկը, առանձին-առանձին վերցրած, չի պարունակում վիրավորանքի կամ զրպարտության հատկանիշները: Ավելին, այդ արտահայտություններից եւ ոչ մեկը վերաբերելի չէ Նարեկին: Ուստի եւ՝ դատավոր Արթուրի կողմից դրանք, որպես Նարեկի պատիվն ու արժանապատվությունն արատավորող համարելը ոչ միայն անհիմն ու ոչ իրավաչափ է, այլև լկտիության, սանձարձակության, կամայականության հերթական ցցուն դրսևորում:

Ստացվում է՝ դատարանի համար կարելոր չեն գործող օրենքների պահանջները, կարելոր են ենթադրությունները եւ, իհարկե, ոտքեր թուլացնող պատվերները:

Դատարանի կողմից հայցվորի վրա դրված ապացուցման պարտականությունը չի կատարվել, իսկ դատարանը, շրջանցելով օրենքի պահանջը, դրան նշանակություն չի տվել

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **«Գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պարտավոր է ապացուցել իր պահանջների եւ առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, եթե այլ բան նախատեսված չէ...»:** Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ **«Եթե բոլոր ապացույցների հետազոտումից եւ գնահատումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետեւանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող անձը»:**

Այսպիսով՝ օրենքը հստակ սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ինքը պետք է ապացուցի իր կողմից վկայակոչված հանգամանքները, եւ եթե վերջինս դա չի կարողանում անել, ապա դրա բացասական հետեւանքները կրում է ինքը: Դատարանի 2019 թ. փետրվարի 20-ի որոշմամբ (Ապացուցման պարտականությունը բաշխելու մասին) հայցվորի վրա դրվել էր վեց փաստի ապացուցման բեռ: Եվ ի՞նչ էք կարծում՝ հայցվորը կատարե՞ց դատարանի որոշումը: Իհարկե ոչ. դատարանի պահանջած ոչ մի ապացույց էլ հայցվորը չներկայացրեց: Դատավոր Արթուրը հիշե՞ց 62-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված բացասական հետեւանքները՝ ապացույցները չներկայացնելու դեպքի մասով: Իհարկե ոչ: Դատարանը չհամարձակվեց նույնիսկ ծայուտ հանել պահանջված ապացույցները չներկայացնելու հանգամանքի վերաբերյալ: Դատավորը չգարմացավ, երբ, ի վերջո, հայցվորը գոնե մեկ ապացույց չներկայացրեց, որով կարող էր հաստատել իր պատիվն ու արժանապատվությունն արատավորված լինելու մասին:

Եվ չնայած այդ ամենին, դատավորի ցինիզմը հասավ գագաթնակետին՝ վճռի մեջ արձանագրելով՝ **«Դատարանը վերոնշյալ փաստերի համադրմամբ կատարված վերլուծության արդյունքում...»:**

Անամոթ տղա, այդ ո՞ր փաստերի վերլուծության մասին է խոսքը, չէ՞ որ հայցվորը որեւէ փաստ կամ ապացույց չի ներկայացրել... Մի՞թե այդչափ անգրագետ էք, որ վճիռը գրելիս չէք հիշել 66-րդ հոդվածի 1-ին մասը. **«Դատարանը, գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ ապացույցների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ»:** Պատկերացնո՞ւմ եք, չկան փաստեր, չկան ապացույցներ, բայց դատավորն ունի ներքին համոզում...

Արթուր դատավորն ամեն ինչ արեց, որ պատասխանողի ապացույցները հիմք չընդունվեն

2019 թ. փետրվարի 20-ին, ինչպես նշեցինք, դատարանն ընդունեց որոշում՝ **«Ապացուցման պարտականությունը բաշխելու մասին»:** Պատասխանող կողմի վրա դրվեց երեք փաստի ապացուցման պարտականություն: Մենք պատրաստեցինք անհրաժեշտ ապացույցները, սակայն... **«Ապացուցման պարտականությունը բաշխելու մասին»** դատարանի որոշման մեջ

նշվել է՝ **«Սահմանել գործին մասնակցող անձանց կողմից ապացույցներ եւ դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելու ժամկետը՝ մինչև հաջորդ դատական նիստը»:**

Հաջորդ դատական նիստը նշանակվեց 2019 թ. մայիսի 21-ին: Մինչդեռ պատասխանողը դատարանի այդ որոշումը ստացավ 2019 թ. մայիսի 16-ին, այսինքն՝ սպասվող դատական նիստից երեք օր առաջ կամ «Ապացուցման պարտականությունը բաշխելու մասին» որոշումը կայացնելուց մոտ հարյուր օր հետո (ըստ գործող օրենքի՝ դատարանն այդ որոշումը կողմերին պիտի ուղարկեր երեք օր հետո): Այդ ամենի հետեւանքով, բնականաբար, անհնար եղավ սահմանված ժամկետում ներկայացնել ապացույցները:

2019 թ. մայիսի 21-ի դատական նիստում դատավորը հայտարարեց. **«Դատարանն արձանագրում է, որ կողմն ապացուցման բեռը բաշխելու մասին որոշումը ստացել է 2019 թ. մայիսի 14-ին, Սամվել Ալեքսանյանը՝ մայիսի 15-ին, իսկ «Մյունխաց երկրի» մասով դատարանը դեռեւս չի ստացել հավաստագիր: Դատարանը գտնում է, որ պետք է ապացույցներ ներկայացնելու ժամկետը երկարաձգել մինչև հաջորդ դատական նիստը սկսելը: Այսինքն մինչև 2019 թ. հուլիսի 16-ի ժամը 16.00: Այդ մասին դատարանը կտեղեկացնի նաև պատասխանող կողմին, որպեսզի ապահովվի նաև ապացույց ներկայացնելու պատասխանող կողմի իրավունքը»:**

Պատասխանող «Մյունխաց աշխարհ» ՍՊԸ-ին դատարանը (այդուհանդերձ) տեղյակ չպահեց ապացույցները ներկայացնելու նոր ժամկետի մասին: Հաջորդ դատական նիստը սկսեց 2019 թ. հուլիսի 16-ին, ուղիղ ժամը 16.00-ին: Ժամը 16.01 րոպեին Սամվել Ալեքսանյանը ներկայացրեց պատասխանողներից պահանջված ապացույցները, ինչպես էլ միջնորդությունները՝ ուղղված ապացույցներ ձեռք բերելուն:

Արթուր դատավորը չընդունեց ապացույցները՝ պատճառաբանելով, որ դրանք պետք է ներկայացվեին մինչև ժամը 16.00-ն, իսկ հիմա 1 րոպե անցել է սահմանված ժամկետից: Այդքանից հետո դատավորը տարօրինակորեն հայտարարեց՝ ապացույցները ներկայացնել հաջորդ դատական նիստին՝ 2019 թ. հոկտեմբերի 9-ին: 2019 թ. հոկտեմբերի 9-ի դատական նիստում դատավորն առաջարկեց ապացույցները ներկայացնելուց առաջ նշել, թե ինչի մասին է խոսքը: Մեր մի քանի թվարկումներից հետո դատավորն արթնացավ՝ ապացույցներ ներկայացնելու սահմանված ժամկետն ավարտված է, ուստի եւ չի կարող պատասխանողի ապացույցներն ընդունվել: Ստիպված էինք նույն օրն ապացույցները հանձնել դատարանի գրասենյակ: Սակայն դատավորի կամայականությունը շարունակվեց դրանից հետո նաև... Եվ դատաքննության ընթացքում որեւէ անդրադարձ չեղավ մեր կողմից ներկայացված ապացույցներին:

Արթուր դատավորի եւս մեկ կամայականության մասին

Խոսքը մեր կողմից ներկայացված միջնորդությունների ճակատագրի մասին է: Երբ 1 րոպե ուշացնելու համար Արթուրը չընդունեց պատասխանողի ապացույցները, մեր կողմից ներկայացվեցին նաև միջնորդություններ, որոնց ներկայացման համար

նույնպես ժամկետը սպառված էր (եթե հավատալու լինենք դատավորին): Դատավորը մոռացավ վայրկյաններ առաջ իր արտահայտած դիրքորոշումը՝ ժամանակը սպառված լինելու մասին, եւ թույլատրեց ներկայացնել միջնորդությունները:

Ու, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 63 եւ 64 հոդվածների դրույթներով, երեք միջնորդություն ներկայացրին՝ ուղղված ապացույցներ ձեռք բերելուն: Մեկ միջնորդությամբ էլ փորձեցինք ՁՊՄԿ տնօրեն Մհերից գործի համար էական նշանակություն ունեցող տեղեկություններ պահանջել: Մեկ այլ միջնորդությամբ փորձեցինք ապացույցներ պահանջել հայցվորից: Ընդ որում՝ խոսքն այնպիսի ապացույցների մասին էր, որոնք բացառապես գտնվում էին կոնկրետ ընկերությունում կամ կոնկրետ անձի մոտ: Այդ միջնորդություններից եւ ոչ մեկը չբավարարվեց՝ ինչ որ կիսագրագետ եւ անհողաբաշխ պատճառաբանությամբ:

Եվ պատասխանող կողմն այս դեպքում նույնպես զրկվեց իր իրավունքներն իրացնելու հնարավորությունից, զրկվեց գործի համար էական նշանակություն ունեցող ապացույցներ ձեռք բերելու իրավունքից:

Դատավորն այդպես էլ չհասկացավ, որ «Սյունյաց երկրի» վիճահարույց հրապարակումը պայմանավորված է գերակա հանրային շահով

«Քաջարան. այսպես էլ ապրում ենք» վերտառությամբ հրապարակումը պայմանավորված էր հանրային գերակա շահով: Հոդվածում առկա տեղեկատվությունը բխում էր հասարակության համար հետաքրքրություն ներկայացնող ոլորտի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու անհրաժեշտությունից: Նման դեպքերում (գերակա հանրային շահի դեպքում) բացառվում է վիրավորանքի եւ զրպարտության առկայությունը: Ինքներդ դատեք՝ ո՞վ է Նարեկը, ո՞ւմ է հետաքրքիր կամ ո՞ւմ է պետք այդ տղան, որի համար մարդ ժամանակ ծախսի եւ հոդված գրի: Որքա՞ն ճիշտ էր երջանկահիշատակ Մհեր Եղիազարյանը, երբ գրում էր՝ «...Նարեկ Ամբարյան հայցվորը սովորական մի գաստարբայտեր է, որ հին իշխանությունների հովանավորությամբ եկել է Քաջարանի կոմբինատ՝ փող աշխատելու, ինչը եւ անում է հեքիաթային հաջողությամբ» («Սյունյաց երկիր», N 28 (486), 7 նոյեմբերի 2018 թ.): Վիճահարույց հրապարակումը հանքարդյունաբերական մի ամբողջ միջավայրի մասին էր, որտեղ ամեն ինչ որոշում է սայարկա գողացողների շայկան: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը սահմանում է. **«Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված փաստացի տվյալները հրապարակային ներկայացնելը չի համարվում զրպարտություն, եթե դա տվյալ իրավիճակում եւ իր բովանդակությամբ պայմանավորված է գերակա հանրային շահով...»:** Դատարանը, մինչդեռ, աչքաթող արեց հրապարակման մեջ արձարծված հարցերի կարեւորությունը եւ այն, որ դրանք վեր են հանում Սյունիքի մարզի եւ ամբողջ հանրապետության համար կարեւոր նշանակություն ունեցող խնդիրներ:

Դատավորը մոռացավ կամ ուղղակի չհասկացավ, որ մի շարք նախադեպային ակտերի համաձայն՝ գերակա հանրային շահով պայմանավորված լինելու պայմանն ունի գերակշռող ազդեցություն, իսկ մյուս պայմանները՝ լրացուցիչ բնույթ: Դրանով դատարանը ոչ միայն սխալ մեկնաբանեց գերակա հանրային շահի դրույթը, այլ նաև մարդու՝ կարծիքի ազատ արտահայտման, գնահատողական դատողություններ անելու հիմնարար իրավունքը: Այդ ամենից հետո ծիծաղելի կլինի քննարկել՝ արդյո՞ք դատավորի պաշտոնը զբաղեցնող անձը ծանոթ է ՀՀ սահմանադրության 42-րդ հոդվածին, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին մասին:

Նարեկը փող էր ուզում՝ 3 մլն դրամ՝ իբր ոչ նյութական վնասի փոխհատուցման գումար, բայց...

Հայցվոր Նարեկը հայցադիմումով պահանջում էր 3 մլն դրամ՝ իր պատվին եւ արժանապատվությանն իբր պատճառված ոչ նյութական վնասը փոխհատուցելու նպատակով:

Նրա ախորժակի մասին գիտեինք, բայց...

Այս դեպքում պետք է ապացուցեր, որ ինքն իրոք վնաս է կրել, ինչ չափով է կրել եւ ինչ կառուցվածք ունի ենթադրյալ վնասը:

Պետք է հիմնավորեր, թե ինչու չի կարելի իբր պատճառված վնասի վերանգնմանը հասնել ոչ նյութական եղանակով:

Պետք է հիմնավորեր, թե ինչու ոչ նյութական փոխհատուցման հետ մեկտեղ պետք է կիրառել նյութական փոխհատուցման միջոց:

Վերոնշյալ բոլոր դրույթներն ամրագրված են Սահմանադրական դատարանի ՄԴՈ-997 որոշման մեջ (պարագրաֆ 11):

Արթուրը թքեց Սահմանադրական դատարանի շատ հստակ այդ պահանջների վրա եւ ոչ մի ապացույց կամ հիմնավորում չպահանջեց իբր կրած վնասը ցույց տալու համար:

Արթուրն ըստ էության տեղյակ չէր նաև Սահմանադրական դատարանի նշված որոշման մեկ այլ դրույթի. «...*Արատավորող արտահայտությունների (գործողությունների) արդյունքում պատճառված վնասի դիմաց որպես առաջնահերթություն անհրաժեշտ է կիրառել ոչ նյութական փոխհատուցման ձևերը: Նյութական հատուցումը բավարար չէ պատճառված վնասը փոխհատուցելու համար*»:

Եվ, օրենքն ու օրենքի կարգավորումները մի կողմ դնելով, որոշվեց «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ-ից բռնագանձել 300 հազար դրամ:

Նման վճիռ կայացնելուց առաջ Արթուրը հաշվի չէր առել նաև ո՛չ թերթի ֆինանսական դրությունը, ո՛չ վեճի առարկա հրապարակման տարածման շրջանակը, թեև դրանք նույնպես գործող օրենքի հստակ պահանջներից են: Ավելին, դատավորը շրջանցեց նաև «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի դրույթները եւ անտեսեց նախադեպային դատական ակտի

գոյությունը (ԵԴ/12308/02/18): Վեճի առարկա հրապարակումը մինչ այդ դատաքննության առարկա էր դարձրել նաև Պոլոսկով Սիերը, ով նույնպես «Սյունյաց աշխարհից» եւ Սամվել Ալեքսանյանից 3 մլն դրամ էր ուզում, սակայն դատարանն այդ պահանջը գնահատել էր անհիմն ու մերժման ենթակա: Եվ այդ նախադեպն Արթուրը շրջանցեց՝ չունենալով նման իրավունք:

Վերաքննիչն այնքան արժանապատվություն չունեցավ, որ կարողանար հակադրվել կամայականությունների շքերթին

Ինչպես արդեն նշել ենք, Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2020 թ. հուլիսի 7-ի վճռի դեմ ներկայացրել ենք վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը քննեց 2020 թ. դեկտեմբերի 22-ին: Քննությունն իրականացվել է դատավոր Նորա Կարապետյանի նախագահությամբ եւ դատավորներ Անի Մխիթարյանի ու Գագիկ Խանդանյանի մասնակցությամբ: Դատարանը վերաքննիչ բողոքում արտահայտած որեւէ հարցի պատասխան չի տվել եւ իր հերթին հնարավորություն չի տվել պատասխանող կողմին (բողոքաբերին)՝ իրացնելու իր իրավունքները: Անգամ խուսափել է գործը ոչ գրավոր ընթացակարգով քննելուց, թեեւ միջնորդություն էինք ներկայացրել դատական նիստ հրավիրելու մասին:

Եվ կայացվել է ծիծաղելի, ավելի ճիշտ՝ ողորմելի որոշում. միեւնույն նախադասության մեջ եւ միեւնույն իմաստով գործածված «ասպատակ» ու «ավագակախմբի անդամ» արտահայտություններից միայն վերջինն է համարել Նարեկին ուղղված, ինչի համար էլ վիրավորանքի համար սահմանված 100 հազար դրամը նվազեցրել է 50 հազարով, Նարեկին էլ պարտադրել է «Սյունյաց աշխարհին» (որպես նախապես վճարված պետական տուրքի գումար) վճարել 11 հազար դրամ: Վերաքննիչի որոշմանը կարելի է ծանոթանալ «Դատալեքս» տեղեկատվական համակարգում: Ընթերցեք եւ կհամոզվեք, որ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորները տասնյակ էջերի վրա ճոթ-ճոթ գալուց, ծալ-ծալ լինելուց հետո ծնկաչոք վիճակում էին հայտնվել...

Անշուշտ, խղճացի այդ դատավորներին, բայց եւ հիշեցի՝ նախ՝ Պատմահոր ողբի այն տողերը, որ նվիրված են դատավորներին: Հետո հիշեցի Սյունյաց աշխարհի մեծ զավակ եւ մեծ քնարերգու Համո Սահյանի խոսքերը՝

«Փոխվել	են	դերերն	ու	տեղերը,
Բայց	նույնն	է	երախը	վիշապի...
Սրա՞նք	են	այս	երկրի	տերերը,

Աղոթեմ, որ մահս շտապի...»:

Հ.Գ.

Մոտ երեք տարի տեւած եւ առայսօր շարունակվող դատավարության ընթացքում (ԵԴ/12226/02/18) բախվել ենք ոչ միայն նշված կամայականություններին, բայց բավարարվենք շարադրվածով...

Անկեղծորեն՝ չենք զայրանում, չենք զարմանում, նույնիսկ հպարտություն ենք ապրում ինչ-որ առումով. մարգային մի լրատվամիջոցի դեմ ոտքի է ելել Հայաստանի

ամենախոշոր ֆինանսական բուրգը, ոտքի են ելել տասնյակ փաստաբաններ, դատարաններ ու դատավորներ, ոտքի են ելել Մելիք Ֆրանգյուլի, դաչաղ Փանահ խանի շառավիղները... Ու այդպես՝ չորս տարի շարունակ... Եվ այնքան թույլ են ու վախկոտ, ստրուկ են ու տկարամիտ, որ անգամ Հայաստանի Հանրապետության պատկան մարմինների լռության կամ քաջալերանքի պայմաններում չեն կարողանում ծնկի բերել «Սյունյաց երկրին»։ ...Մենք կանք ու լինելու ենք, իսկ ազատ խոսքի դեմ պայքարողներն անպայման հայտնվելու են Սյունիքի պատմության աղբանոցում։ Ու մեռելահոտ ու արյունոտ փողերը նրանց չեն փրկելու ահեղ դատաստանից...

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/qajaran-ankakh-petutyuny-e%D6%82-hayastan-petutyuny-or-ibr-menamartum-en-mimyants-dem-irakanum-miasin-en-syuniqum-paterazmum-khosqi-azatutyan-dem>

08.02.2021

Արթուր Դավթյանը Սյունիքում ամփոփել է մարզի դատախազության եւ իրավապահ մյուս մարմինների 2020թ. աշխատանքների արդյունքները

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն այցելել է Սյունիքի մարզ՝ ամփոփելու 2020թ. ընթացքում մարզի դատախազության գործունեությունը եւ մարզի իրավապահ մարմինների ներկայացուցիչների հետ քննարկելու արցախյան 44-օրյա պատերազմից հետո ստեղծված նոր իրողությունների պայմաններում մարզի բնակչության հիմնական իրավունքների պաշտպանության եւ անվտանգության ապահովման, հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման հետ կապված ակտուալ խնդիրները։

Մարզի դատախազությունում անցկացված խորհրդակցությանը, որին, բացի իրավապահ մյուս մարմինների մարզային ստորաբաժանումների ղեկավարներից, մասնակցել է նաեւ Սյունիքի մարզպետը։ Մանրամասն քննարկվել են մարզի տարածքում հանցավորության ընդհանուր միտումները, բնակչության իրավունքների պաշտպանության առումով ստեղծված նոր մարտահրավերները, հանցագործությունների կանխման, բացահայտման ուղղությամբ իրականացված աշխատանքը, ինչպես նաեւ քրեական վարույթներով դատախազական գործառույթների իրացման արդյունքները։

2020թ. Սյունիքի մարզում արձանագրվել է հանցագործության դեպքերի նվազում 5%-ով՝ 744 դեպք՝ 2019թ. 783 դեպքի դիմաց։ Նվազել են հատկապես առանձնապես ծանր, ծանր եւ միջին ծանրության հանցագործությունների դեպքերը։

2020թ. արձանագրվել է սպանության 1 դեպք՝ նախորդ տարվա 4 դեպքի դիմաց, սպանության փորձի դեպքեր չեն արձանագրվել, 5 դեպքով ավելացել են դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերը՝ /13-8/։

Մարզում 7 դեպքով նվազել են սեփականության դեմ ուղղված հանցագործության դեպքերը։ Նախորդ տարվա համեմատ էապես՝ մոտ 38%-ով

նվազել են հատկապես բնակարանային գողությունները՝ /19-31/: Նման ցուցանիշը մեծապես պայմանավորված է կորոնավիրուսային համավարակի պատճառով հայտարարված արտակարգ դրության, ինչպես նաև 44-օրյա պատերազմով պայմանավորված՝ երկրում հայտարարված ռազմական դրության իրավական ռեժիմներով նախատեսված սահմանափակումներով, որոնց պայմաններում քաղաքացիներն ավելի քիչ են բացակայել իրենց բնակարաններից:

2020թ. ընթացքում բացահայտվել է կոռուպցիոն հանցագործության 36 դեպք, ինչը 6-ով կամ 20%-ով ավելի է նախորդ տարվա համեմատ: Դրանով պայմանավորված՝ ավելացել է նաև հարուցված քրեական գործերի թիվը:

Սյունիքի մարզում գրանցվել է ճանապարհային երթևեկության եւ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու 55 դեպք, գրեթե նույնքան, որքան 2019թ.-ին, սակայն մահվան ելքով պատահարներն ավելի են եղել 2-ով /17-15):

Նկատի ունենալով պատերազմի հետեւանքները հատկապես Սյունիքի մարզի տարածքում ճանապարհային հաղորդակցության ոլորտում՝ ՀՀ գլխավոր դատախազը հատկապես շեշտել է մարզկենտրոնի եւ հանրապետության մյուս տարածքների հետ ՀՀ հարավային բնակավայրերի տրանսպորտային հաղորդակցության, բնակիչների երթևեկության անվտանգության ապահովման եւ հնարավոր պատահարները նվազագույնի հասցնելու ուղղության իրավապահ

մարմինների ջանքերի բազմապատկման անհրաժեշտությունը՝ հատկապես ոստիկանության պարեկային ծառայությունների, ՃՈ-ի կողմից ճանապարհների երթևեկության հսկողության ուժեղացման առումով:

Մարզի տարածքում 2020թ. արձանագրվել է զենքի, ռազմամթերքի ապօրինի շրջանառության դեպքերի կտրուկ ավելացում 23-ով՝ կամ գրեթե 4.5 անգամ. 2019թ.-ի 5 նման դեպքի դիմաց 2020թ.-ին արձանագրվել է 28 դեպք: Նման պատկերը մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, որ Սյունիքի մարզը եւ հատկապես Գորիս քաղաքը, պատերազմի ողջ ընթացքում հանդիսացել է Հայաստանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության միջեւ հաղորդակցության, լոկացիոն հիմնական հանգուցային կետը: Պատերազմի ընթացքում եւ դրանից հետո Արցախից ապօրինի կերպով զենք զինամթերքը դեպի ՀՀ տարածք տեղափոխելու բազմաթիվ դեպքերը բացահայտվել են հենց մարզի հիմնական մայրուղիներում տեղակայված հսկիչ կետերի կողմից իրականացվող ստուգումների արդյունքում:

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը հանձնարարել է 2021թ.-ի ընթացքում ինչպես անհրաժեշտ բացատրական աշխատանքների, այնպես էլ օպերատիվ-հետախուզական գործիքակազմի կիրառությամբ գործուն քայլեր ձեռնարկել մարզի տարածքում բնակչության մոտ հնարավոր կուտակված ապօրինի զենք-զինամթերքի հայտնաբերման ուղղությամբ՝ շեշտելով այս աշխատանքի կարեւորությունը հատկապես հանրապետությունում ներքին անվտանգության ապահովման, հրազենի կամ այլ զինատեսակների կիրառմամբ հանցագործությունների կանխարգելման տեսանկյունից:

Ընդհանուր առմամբ գլխավոր դատախազը գոհունակություն է հայտնել 2020թ.-ի՝ հատկապես Սյունիքի մարզի համար ծանրագույն տարվա ընթացքում, արտակարգ դրության, ռազմական դրության պայմաններում, դեպի Արցախ եւ հակառակ ուղղությամբ տրանսպորտային, տեխնիկական միջոցների եւ մարդկանց աննախադեպ հոսքի պայմաններում մարզում օրինապահության, հասարակական կարգի ապահովման ուղղությամբ իրավապահ մարմինների մարզային կառույցների կատարած աշխատանքը: Արթուր Դավթյանը նշել է, որ 2021թ. բացարձակ առաջնահերթություն է մարզի բնակչության բնական կենսագործունեության, հատկապես սահմանամերձ դարձած բնակավայրերի բնակչության անվտանգության ապահովումը, կյանքի, ազատ տեղաշարժի եւ կենցաղավարման հիմնարար իրավունքների երաշխավորումը՝ այդ նպատակով սերտորեն համագործակցելով ինչպես հանրապետական, այնպես էլ հատկապես համայնքային մարմինների եւ մարզում ծառայություն իրականացնող ՌԴ սահմանապահ ուժերի ստորաբաժանումների հետ:

Ելնելով առանձին հանցատեսակներով նախորդ տարվա ընթացքում արձանագրված միտումներից՝ ՀՀ գլխավոր դատախազը կոնկրետ հանձնարարություններ է տվել նաեւ քրեական վարույթներով իրականացվող նախնական քննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

Աղբյուրը՝ <https://www.prosecutor.am/am/mn/8081/>

09.02.2021

Մեկ անձի նահանջի հրամանի հետևանքով Սյունիքի 50 բնակավայրեր անորոշության մեջ են

Կապան-Ճակատեն ճանապարհին տեղի ունեցած միջադեպից հետո ադրբեջանցիները ճանապարհին ավելի մոտ են տեղակայվել: Այս մասին ԱԺ հայտարարությունների ժամին ասաց պատգամավոր Աննա Գրիբգորյանը:

«Նախօրեին Կապան-Ճակատեն ճանապարհին, որը համատեղ հսկվում է հայ, ռուս և ադրբեջանցի սահմանապահների կողմից, միջադեպ է տեղի ունեցել այն պատճառով, որ Ադրբեջանը փորձել է սադրանք իրականացնել՝ տեղադրելով իր հերթական վահանակը: Այդ միջադեպի հետևանքով ադրբեջանցի սահմանապահներն այժմ տեղակայվել են ճանապարհին շատ ավելի մոտ», - ասաց նա:

Ըստ պատգամավորի՝ մինչ Ազգային ժողովն այսօր զբաղված է երկրի համար անկարևոր հարցերով, այնուհետև շարունակում է ապրել լրջագույն սպառնալիքների ներքո: «Սպառնալիքներն առաջացել են, որովհետև ընդամենը մեկ մարդու բանավոր պայմանավորվածությամբ դեկտեմբերի 18-ին մեր տղաները ստիպված են եղել զիջել դիրքերը և հանձնել թշնամուն մեր անվտանգության գոտին: Այսօր Կապանն ու սահմանամերձ գյուղերը գտնվում են թշնամու նշանառության տակ:

Օդանավակայանից ընդամենը 200 մետր հեռավորության վրա կանգնած են ադրբեջանցի զինվորները, ովքեր դիտարկում են ինչպես Կապանի օդանավակայանը, այնպես էլ միջպետական ճանապարհը: Շուտնուխցին ունենալով բոլոր հիմքերը, փաստաթղթերը, քարտեզները, չկարողացավ պահպանել իր տունը նույն այդ մեկ անձի նահանջի հրամանի հետևանքով»,- ասաց նա:

Ըստ պատգամավորի՝ Գորիս-Կապան ճանապարհն այժմ անցնում է Ադրբեջանի տարածքով, «Բարի գալուստ Ադրբեջան» պաստառը մեզ ողջունում է Կապան գնալիս:

Աննա Գրիգորյանի խոսքով՝ սահմանամերձ դարձած 50-ից ավելի բնակավայրեր այսօր գտնվում են անորոշության մեջ: Բազմաթիվ մարդիկ վերցրել էին գյուղատնտեսական վարկեր, իսկ այժմ կորցրել են արոտավայրերը, գյուղատնտեսական նշանակության հողերը: Մարդիկ անորոշության մեջ են, քանի որ չեն իրականացվել ու չեն իրականացվում սահմանագատման աշխատանքները, սահմանապահներն էլ դեռ սահմանի ամբողջ երկայնքով չեն տեղակայվել, հավելեց նա:

«Օրվա հրամայական է վերաձևավորել Սյունիքի ենթակառուցվածքային ամբողջ համակարգը: Հրատապ կերպով պետք է սկսել Տաթև-Կապան ճանապարհի հիմնանորոգումը, հրատապ է նաև Կապան-ձակատեն ճանապարհի այլընտրանքի կառուցումը: Սրանք այն հարցերն են, որոնք օր իսկ չպիտի հետաձգվեն»,- նշեց Գրիգորյանը:

Աղբյուրը՝ <https://www.lragir.am/2021/02/09/619670/>

10.02.2021

Կառավարությունը նախատեսում է այլընտրանքային ճանապարհներ կառուցել Սյունիքի մարզում

ՀՀ կառավարությունը նախատեսում է այլընտրանքային ավտոճանապարհներ կառուցել Սյունիքի մարզում: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին Ազգային ժողովում կառավարության հետ հարցուպատասխանի ընթացքում ասաց Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Սուրեն Պապիկյանը, պատասխանելով անկախ պատգամավոր Աննա Գրիգորյանի հարցին:

«Այո, կառուցելու ենք: Եղանակային պայմանները թույլ տալուն պես կառուցելու ենք»,- ասաց Պապիկյանը:

Արցախի նկատմամբ Ադրբեջանի սանձազերծած լայնածավալ պատերազմից հետո Սյունիքի մարզի որոշ ավտոճանապարհների խնդիրը դեռ լուծված չէ:

Աղբյուրը՝ <https://armenpress.am/arm/news/1043026/>

10.02.2021

Սյունիքի և Գեղարքունիքի մարզերի մոտ 40 բնակավայրեր կներառվեն սահմանամերձ համայնքների ցանկում

ՀՀ կառավարությունը նախատեսում է սահմանամերձ համայնքների ցանկում ներառել նաև պատերազմի հետևանքով սահմանամերձ դարձած Սյունիքի և Գեղարքունիքի մարզերի մոտ 40 բնակավայրերը: Այս մասին Ազգային ժողովում կառավարության հետ հարցուպատասխանի ընթացքում ասել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Մեսրոպ Առաքելյանը՝ պատասխանելով «Լուսավոր Հայաստան» խմբակցության անդամ Սրբուհի Գրիգորյանի հարցին:

«Հարցը կարգավորվում է սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին օրենքով, որտեղ այս պահին ներառված է մոտ 40 համայնք: Կառավարության վաղվա նիստում կներկայացվի ցանկում փոփոխությունների նախագիծ, որի համաձայն՝ Սյունիքի մարզի և Գեղարքունիքի մարզի ևս մոտ 40 համայնք կներառվի այդ ցանկում, որտեղի բնակիչները կօգտվեն սահմանված արտոնություններից», - ասել է նա:

Սահմանամերձ դարձած համայնքների բնակիչները կազատվեն գույքահարկի վճարումից և որոշակի մասնակի փոխհատուցում կստանան նաև կոմունալ վճարների մասով: Նրանց երեխաների համար անվճար կդառնան նաև դպրոցական դասագրքերը:

Աղբյուրը <https://www.1lurer.am/hy/2021/02/10/%D5%8D%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB%D6%84%D5%AB-%D6%87-%D4%B3%D5%A5%D5%B2%D5%A1%D6%80%D6%84%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB%D6%84%D5%AB-%D5%B4%D5%A1%D6%80%D5%A6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B4%D5%B8%D5%BF-40-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B5%D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80-%D6%87%D5%BD-%D5%AF%D5%B6%D5%A5%D6%80%D5%A1%D5%BC%D5%BE%D5%A5%D5%B6-%D5%BD%D5%A1%D5%B0%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B4%D5%A5%D6%80%D5%B1-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B5%D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D6%81%D5%A1%D5%B6%D5%AF%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A2%D5%B6%D5%A1%D5%AF/411841>

12.02.2021

Խնձորեսկի սահմանի մոտ աղբբեջանցիները 173 գլուխ ոչխար են տարել. բանակցություններից հետո վերադարձրել են

Խնձորեսկի համայնքապետարանը հայտարարություն է տարածել, որում ասվում է.

«Սույն թվականի փետրվարի 11-ին՝ ժամը 12:00-ի սահմաններում, Խնձորեսկ գյուղի բնակչի՝ թվով 185 գլուխ մանր եղջերավոր անասունների մի մասն, արածելով մոտեցել է թշնամու սահմանին, որտեղից էլ զինված աղբբեջանցիները մոտեցել են հովվին, և հաշված թուփերի ընթացքում, հոտից թողնելով ընդամենը 12 գլուխ ոչխար, հեռացել են: Անմիջապես դեպքի վայր են ժամանել հայ սահմանապահներն ու գյուղացի հովիվները, իսկ մեկ ժամ անց՝ Երվանդ Մալունցը և 1-ին բանակային կորպուսի հրամանատարությունը. բանակցություններից հետո գյուղացուն է վերադարձվել 173-1 գլուխ ոչխար»:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/KhndzoeskOfficial/posts/242902393992849>

15.02.2021

Ավելացվել է ռուս սահմանապահների ևս մեկ հենակետ. Սյունիքի մարզպետարան

Փետրվարի 13-ին Սյունիքի մարզի Ագարակ գյուղի (Կապան համայնք) հարևանությամբ ադրբեջանական կողմից հնչել են անկանոն կրակոցներ դեպի օդ: Փաստն արձնագրվել է հայ և ռուս սահմանապահների կողմից. վերջիններիս հրամանատարությունը մի քանի ժամ շարունակ դիտարկում է կատարել տարածքում, գրանցել միջադեպը, որից հետո տվյալ հատվածում ավելացվել է ռուս սահմանապահների ևս մեկ հենակետ, որտեղ այժմ շուրջօրյա հերթապահություն է իրականացվում:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/avelatsvel-e-rus-sahmanapahneri-evs-mek-henaket-syuniqi-marzpetaran>

Սյունիքի Տեղ համայնքի բոլոր գյուղերը կընդգրկվեն ՀՀ սահմանամերձ համայնքներին տրվող սոցիալական աջակցության ծրագրում

16.02.2021

Արարատի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և Տավուշի 38 բնակավայրերից բացի, գործող կարգավորումներով նախատեսված արտոնություններից այսուհետ կօգտվեն նաև 2020թ. պատերազմական գործողությունների հետևանքով սահմանամերձ դարձած Սյունիքի և Գեղարքունիքի մարզի 39 բնակավայրերը:

Ըստ այդմ՝ կփոխատուցվի վերոնշյալ բնակավայրերում ապրող շուրջ 14 հազար բնակչի անշարժ գույքի հարկը (2021 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների դեպքում), 50 տոկոսով կփոխատուցվեն նաև 2021 թվականի փետրվարի 1-ից հետո սպառած բնական գազի և էլեկտրաէներգիայի, օգտագործած ռոռզման ջրի վճարները:

Սահմանամերձ բնակավայրերում ապրող աշակերտներին դպրոցական դասագրքերը կտրամադրվեն անվճար:

Բնակավայրերի ցանկին կարող եք ծանոթանալ այստեղ՝

ԿԱՊԱՆ

- Ագարակ
- Գեղանուշ
- Գոմարան
- Դավիթ Բեկ

- Դիցմայրի
- Եղվարդ
- Խղրանց
- Կաղնուտ
- Ներքին Հանդ
- Շիկահող
- Սգնակ
- Սյունիք
- Սրաշեն
- Ուժանիս
- Ճակատեն
- Ծավ

ԳՈՐԻՍ

- Աղբուլաղ
- Հարթաշեն
- Ձորակ
- Ներքին խնձորեսկ
- Շուռնուխ
- Որոտան
- Վանանդ
- Բարձրավան

ՏԵՂ

- Տեղ
- Արավուս
- Խնածախ
- Խոզնավար
- Կոռնիձոր
- Վաղատուր
- Քարաշեն

ՏԱԹԵՎ

- Խոտ

ՄԵՂԸԻ

- Նոնաձոր

Աղբյուրը՝

<https://m.facebook.com/1812692675426732/photos/a.1855586254470707/4509691472393492/?type=3&source=57>

17.02.2021

Միսական աշխարհի Մեղրի աննվաճ ամբողջ եւ հարավային դարպասը՝ սերունդների արյամբ դարերով պաշտպանված ու սրբագործված, թուրքի կոխան դարձնելու փորձ է արվում

2021 թ. հունվարի 11-ը հայ ժողովրդի պատմության մեջ մտավ իբրև հայոց պետականությունն ու ինքնիշխանությունը կործանման ռելսերի վրա փոխադրելուն միտված նոր սկիզբ (2020 թ. նոյեմբերի 9-ի կապիտուլյացիայից հետո): 2021 թ. հունվարի 11-ը հայոց պատմության մեջ մտավ իբրև Սյունյաց աշխարհն իր երբեմնի փառքից, վեհությունից ու ռազմավարական նշանակությունից զրկելու հերթական հանգրվան:

Նիկոլ Փաշինյանի, Վլադիմիր Պուտինի եւ Իլհամ Ալիևի հանդիպման արդյունքում այդ օրն ընդունված համատեղ հայտարարությունը վերոնշյալ ծրագրերը կյանքի կոչելու ճանապարհային քարտեզի մանրամասների յուրօրինակ հանրագումար է:

Եվ, այդուհանդերձ, հունվարի 11-ի եռակողմ հայտարարության վերաբերյալ օրվա իշխանական թիմն այլ կարծիք ունի, փորձագետներն ու Սյունիքի իրական շահերով մտահոգները, նաև այստեղ բնակվողները մեկ այլ տեսակետ ունեն:

Ի՞նչ ունենք կամ կունենանք մոտ ապագայում, եթե այդ ծրագրերն իրագործվեն, եւ ինչո՞ւ այսպես ստացվեց: Նախ՝ Հայաստանի Հանրապետության հարգելի նախագահներ Լևոն Տեր Պետրոսյան, Ռոբերտ Քոչարյան, Սերժ Սարգսյան... Ձեր առաջնորդությամբ այդ ի՞նչ պետություն կառուցեցինք, որ ինչ-որ պատահականություններ հաջողեցին երկու տարվա ընթացքում հայոց պետականությունը մտցնել փակուղի:

Այդ ի՞նչ պետություն կառուցեցինք, որի հայացքի ներքո կամ որի ջատագովությամբ հօդս ցնդեց Արցախյան երազանքը, որ հազարամյակների պատմության մեջ հայոց ամենանվիրական երազանքներից էր... Հարգելի Սերժ Ազատի, այդ ի՞նչ սահմանադրություն պարտադրեցիք Հայաստանի երրորդ հանրապետությանը, որ հայոց պետության եւ պետականության օրհասի ժամին երկիրը փրկելու իրական եւ ողջամիտ ուղի չի մատնանշում... Հայաստանյան՝ մոտ հարյուրի հասնող հարգելի կուսակցություններ, կուսակցապետեր, մի՞թե դուք իրականում չկաք եւ մի՞՞ք եք կամ ուղեղային մորմոք, այլապես ինչպե՞ս հաջողեցին մեզ այսչափ նվաստացնել ու ստորացնել: Միայն թե չասեք, թե ժողովուրդը նոյեմբերի 9-ից հետո դուրս չեկավ փողոց: Ժողովուրդն իր ցասումն արտահայտեց ավելի ցայտուն եւ հուժկու, նաև ավելի վճռական, քան երբեւէ: Մարդիկ, իբրև դժգոհության բացառիկ արտահայտություն, իրենց սրբության սրբոց հայրենական տներն էին նույնիսկ հրկիզում, բայց դուք (իշխանավորների հանգույն) նրանց համարում էիք եւ համարում էք ոչ դժգոհ ու պասիվ, քանի որ Շուռնուխից, Որոտանից կամ Բերձորից չէին հասնում Երեւան ու միանում փողոցով քայլողներին:

Դուք (ունենալով Վազգեն Մանուկյան փորձառու առաջնորդ) չկարողացաք նոյեմբերի 9-ից հետո փողոցում ընկած եւ տեր չունեցող իշխանությունը վերցնել, քանզի (ինչպես հնչեցնում էիք եւ հնչեցնում էք անընդհատ) իշխանություն չէք ուզում, որովհետեւ սահմանադրական ճանապարհով եք գործընթացն առաջնորդում:

Այդ ե՞րբ եք ուղղափառ օրինապահներ դարձել այդչափ. երկիրը հանձնելուց, մեր ինքնիշխանության ողնաշարը կոտրելուց, մեր լավագույն զավակներին կառափնարան քշելուց եւ մեր ազգային գենոֆոնդի ծաղիկը ոչնչացնելուց, Սյունիքը ներքին թուրքին հանձնելուց չէիք հիշում սահմանադրությունը՝ սպասողական կեցվածք ընդունելով, բայց հիմա քաղաքակիրթ, բարեկիրթ ու օրինապահ եք դարձել: Այդ ի՞նչ շինծու արտահայտություններ եք հորինել ու դրանցից կախվել՝ «կրիտիկական զանգված», «հանրային պահանջ»... Մի՞թե 1945-ին Ռայխստագի բակում «կրիտիկական զանգված» էր հավաքվել, որի ճնշմամբ էլ Ադոլֆ Հիտլեր չարիքը գիտակցեց իր մեղքն ու ինքնասպան եղավ: Հայոց զինված ուժեր, որքան էինք հպարտանում ձեզանով, դուք մեզ համար ասես սրբություն լինեիք, բայց հիմա... Ո՞ւր է պատերազմական օրերի ձեր ոչ բարով նախարարը, որ պատերազմի դեպքում նոր տարածքներ էր մեզ խոստանում՝ Խնձորեսկի ճոճվող կամրջի վրա թռնոտի տալով: Ո՞ւր են մեր գեներալները, հրամանատարները՝ Օնիկ Գասպարյանի եւ Վաղարշակի կողմից առաջնորդվող, որոնց համար ազգային արժանապատվությունը, սպայի պատիվը, թվում է, վեհ պիտի լինեին ամեն ինչից: Հարգելի ԵԿՄ-ականներ, ո՞ւր եք եւ ո՞ւր էիք... Ձեր մարտական ընկերների արյամբ սրբացած հայրենիքը հանձնվեց, ձեր մարտական ընկերների հիշատակը պղծվեց, իսկ դուք... Մի՞թե դուք նույնպես մի՞ֆ էիք: Այդ ինչպե՞ս ստացվեց, որ պատերազմական ծանր օրերին ձեր անունը չլսվեց գեթ մեկ անգամ: Հիշո՞ւմ եք, թե ինչպես էին հայ առասպելական ֆիդայապետերին Մեծ եղեռնից առաջ հալածում-մորթում թուրքերը: Մի՞թե այդպես չվարվեցինք Արցախյան 1-ին պատերազմի մեր հերոսների հետ, որ ժամանակին ձեր հրամանատարներն էին, ձեր ոգեշնչման աղբյուրը...

Հայոց պետական այրեր, այդ ինչպե՞ս եք կարողանում ձեր չգոյության ժամին ձեռք մեկնել եւ պարզեւավճարներ ստանալ սեփական անբանության համար, երբ խնդրահարույց է հարյուրավոր հայ գերիների եւ անհետ կորած մեր քաջորդիների ճակատագրերը...

Ազգային ժողովի՝ այսպես կոչված ընդդիմադիր խմբակցություններ... Պատկերացնել կարելի է, թե քանի-քանի հազար մարդ դուրս կհանվեր փողոց, եթե հանկարծ հարկայինի տեսուչը սխալմամբ մտներ հայտնի մարդու օբյեկտներից մեկը: Հարգելի մտավորականներ, ո՞ւր էիք եւ որտե՞ղ եք հիմա... Արցախյան շարժման սկզբում Վիկտոր Համբարձումյանը, Սոս Սարգսյանը, Սերո Խանգաղյանը, Միլվա Կապուտիկյանը եւ մյուս երեւելիներն էին իրենց սխրալից վարքով հաղթանակի ճանապարհ ցուցանում ազգին, իսկ այսօր... Ովքե՞ր են նրանց փոխարինել կամ փոխարինում ազգային երազանքներից հյուսված-շինված հայոց պատվանդաններին...

Իսկ Սյունիքում...

Պատերազմի վերջին փուլի իրադարձությունները (Սյունիքին առնչվող) եւ հետպատերազմյան զարգացումները (Սյունիքի շուրջ), կամա թե ակամա,

ամենավատ ենթադրությունների ու կասկածների տեղիք են տալիս: Եվ նման առեղծվածային զարգացումների շղթան, կարծեք, ընդհատվելու միտում չունի՝ խտացնելով անորոշության մշուշը:

Փետրվարի 13-14-ին Ազարակի ուղղությամբ թուրքերից կրակահերթեր էինք լսում, իսկ դրանից մի քանի օր առաջ հակաայունիքյան ինչ-որ հուշագիր գաղտնազերծվեց...

Մինչդեռ հայտնի «ակտիվիստները» ցույցեր անելու, ճանապարհներ փակելու, սահմանային գյուղերից «սելֆի» անելու նոր հանձնարարական չեն ստանում չարիքի որջից:

Դեռևս 2014-ից մարզում ներդրված հրոսակախումբը, որը հայոց արեւելյան կողմերում իրեն պետություն է հռչակել եւ իր դաժանությամբ թուրքին չի զիջում, պատրաստ է նոր գործողությունների, եթե հայոց պետությունը եւ երկրի օրվա իշխանավորները համարձակվեն խոչընդոտներ հարուցել Սյունիքն ասպատակելու գործին:

Հայտնի գիժը՝ Հոկտեմբերի 27-ից հետո թեւավորված, մեր բակային ակտիվիստներից մի քանիսին հռչակել է մերօրյա Գարեգին Նժդեհ-ներ՝ պղծելով մեծագույն հայերից այդ մեկի հիշատակը նույնպես...

Սրբապիղծ պատգամավորը, հանուն իր մանդատի եւ պարգեւավճարի, մայրաքաղաքային հարթակներից՝ անդամահատված Շուռնուխի, Որոտանի եւ սահմանային մյուս բնակավայրերի մասին կրկնում է նույն կաղկանձը, ինչ թուրքերն են հնչեցնում:

Գորիս-Կապան մայրուղու մերձակա գրեթե բոլոր իշխող եւ տեսանելի բարձունքներում թուրք-ազերիների մարտական դիրքերն են, որոնց շուրջօրյա նշանառության ներքո երթեւեկում են մեր վարորդներն ու ուղեւորները: Այդ վայրերում՝ թշնամու դիրքերից լսվող կրակահերթերը, կարծեք, մեր առօրյայի անբաժանելի մասն են դարձել:

Գորիս-Կապան մայրուղու առնվազն երեք-չորս հատվածում ադրբեջանցի զինյալներն են մեզ «դիմավորում» (Էյվազլար, Որոտանի մուտք, Թասի ոլորանների վերջնամաս՝ Մազրա գնացող ճանապարհի խաչմերուկ, Շուռնուխ): Գորիս-Կապան մայրուղու երկու հատվածում՝ ազերիների լեզվով գրառումներով վահանակները «Բարի գալուստ Ադրբեջան» արտահայտությամբ են մեզ «ողջունում»: Գորիս-Կապան մայրուղու, ինչպես եւ Կապան-Ծավ (Մ-17) մայրուղու արեւելյան բարձունքներում, նաեւ Կապան համայնքի հարավային ու հարավ-արեւելյան եզերքին, Խոզնավար, Վաղատուր, Խանաձախ, Ներքին Խնձորեսկ գյուղերի մոտակայքում ծածանվում է Ադրբեջանի պետական դրոշը: Կապանից Ուժանիս, Եղվարդ եւ Ազարակ ձգվող ասֆալտապատ ճանապարհն այլևս ադրբեջանական Սեիդլար գյուղի տարածք է, եւ մարդիկ այդ գյուղեր այցելում են Վերին Գյոդաքլուի տարածքով՝ շրջանցող դաշտային ճանապարհով: Առաջիկա օրերին մարզի հարթավայրային եւ ցածրադիր գոտիներում զարնան գյուղատնտեսական աշխատանքները պետք է մեկնարկեն: Մինչդեռ հարյուրավոր

հեկտար դաշտեր եւ այգիներ մշակելու համար գյուղացին դեռեւս անվտանգության երաշխիքներ չի ստանում:

Սպասումներ կան Նոնաձորի (Նյուվադիի) ապագայի հարցում. դեռեւս 1929-ին Մեծ Ալ լճի հետ փոխանակելու հետեւանքով Հայաստանի տարածքում հայտնված գյուղն արդյո՞ք կմնա մեր ենթակայության տակ, թե՞ Ադրբեջանը կթքի նաեւ նշված փոխանակման փաստի վրա ու GPS-ով կգա Նոնաձոր: Այս պահի դրությամբ արժանահավատ տեղեկություններ չկան Սյունիքի սահմանային արոտավայրերի կարգավիճակի մասին՝ Մեծ Իշխանասարի հյուսիս-արեւելյան լանջերից մինչեւ Ծղուկ լեռ, մինչեւ Փոքր Ալ լիճ, ապա մինչեւ Որոտանի ակունքներ:

Շարունակում են անպատասխան մնալ բոլոր հարցերը, որ առաջ են եկել թուրք-ազերիների կողմից միակողմանիորեն, մեխանիկական սկզբունքով եւ անթաքույց պարտադրանքով կատարված «սահմանորոշում»-ից հետո: Կամայական «սահմանորոշման» հետեւանքով անմիջապէս սահմանի վրա են հայտնվել Սյունյաց աշխարհի մի շարք քրիստոնէական սրբավայրեր, որտեղ այցելելու համար ուխտագնացներն անվտանգության երաշխիքների կարիք ունեն այլեւս:

Ի վերջո հանրությունը շարունակում է անտեղյակ մնալ, թե անվտանգության ինչ համակարգ է ներդրվում (եւ արդյո՞ք ներդրվում է) Սյունիք-Ադրբեջան արեւելյան սահմանի մոտ 300 կիլոմետրի վրա. ասում են՝ գաղտնիք է, մինչդեռ ադրբեջանական սահմանապահ կետերը, ինչպէս նշեցինք, ամեն քայլափոխի հիշեցնում են իրենց գոյության մասին:

Եվ այս պայմաններում, ասում են, Սյունիքին զարգացման հեռանկարներ, անվտանգության երաշխիքներ են խոստանում եռակողմ երկու հայտարարությունը (9 նոյեմբերի 2020 թ., 11 հունվարի 2021 թ.):

Դրա հետ մեկտեղ, սակայն, չեն ասում, թե Ադրբեջանական երկաթուղու Օրդուբադ-Զանգեւան հատվածի վերագործարկումով, որը կանցնի Մեղրու տարածքով, Հայաստան անկախ պետությունը կունենա՞ որեւէ իշխանություն ապաշրջափակված այդ ուղու վրա, չէ՞ որ 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարության համաձայն՝ երկաթգիծը կգործի ՌԴ սահմանապահների հսկողությամբ: Չեն ասում նաեւ՝ վերաբացվող երկաթգծին զուգահեռ Մեղրու տարածքով կառուցվելիք ավտոմայրուղու վրա Հայաստանը կունենա՞ որեւէ իշխանություն, թե՞ ոչ:

Չեն ասում՝ վերականգնվող երկաթգծի եւ կառուցվող ճանապարհի շուրջ ադրբեջանական եւ թուրքական կողմերը (Մեղրու տարածքում) ենթակառուցվածքներ ստեղծելու հնարավորություն կունենա՞ն, թե՞ ոչ: Չեն ասում՝ Հայաստան անկախ պետությունում որեւէ մեկը կամ որեւէ պետական ատյան տեղյակ է լինելու, թե վերագործարկված երկաթգծով կամ նորաբաց ավտոմայրուղով՝ Մեղրու տարածքով, թուրքն ինչ զենք ու զինամթերք է

տեղափոխելու Ադրբեջանի արեւմտյան շրջաններ՝ Հայաստանի դեմ վաղվա պատերազմում գործածելու համար:

Ինչ վերաբերում է մերօրյա ծննդահարների մատուցած հեքիաթին, թե ճանապարհների ապաշրջափակման արդյունքում Հայաստանը Պարսկաստանի հետ հաղորդակցության նոր ուղիներ կունենա... Դա սովորական մանիպուլյացիա է: Հայաստանը Պարսկաստանին կապող հրաշալի մայրուղի ունենք՝ Մ-2 մայրուղին, որը 1991-ից գործում է անխափան (անգամ ամենասաստիկ ձնաքթի պայմաններում): Ինչ վերաբերում է Պարսկաստանից Հայաստան (կամ հակառակ ուղղությամբ) կատարվելիք բեռնափոխադրումներին... Դժվար թե գտնվի մի վարորդ, ով Նախիջեւանի տարածքով Ջուլֆա մտնելու հնարավորությունը բաց կթողնի (Երեւանից երկու-երեք ժամ տեւող) եւ կօգտվի սյունիքյան երթուղուց՝ մայրաքաղաքից մինչեւ սահման մոտ 10 ժամ պահանջող: Ասել է թե՛ Մ-2 մայրուղու Գորիս-Կապան-Մեղրի հատվածը (հաղորդակցության ուղիների ապաշրջափակումից հետո) այլեւս պահանջված ու շահեկան չի լինի նախկինի պես: Պահանջված չեն լինի (բնականաբար) ճանապարհին կից (սյունիքյան երթուղուն զուգահեռ) երեսուն տարվա ընթացքում ստեղծված ենթակառուցվածքները, որոնք տեղի բնակչության համար սոցիալ-տնտեսական ապահովության խնդիր էին լուծում շատ թե քիչ:

Մյուս կողմից՝ գտնվելու է մի հայ, ով Երեւանում նստելու է Երեւան-Մոսկվա գնացքը եւ Նախիջեւանով, Օրդուբադով, Ջանգելանով, Հորադիզով, Բաքվով, Դերբենդով մեկնի Ռուսաստան... Գտնվելու է մի գործարար, որ Հայաստանից իր բեռները Ռուսաստան է ուղարկելու Երեւան-Մոսկվա երկաթուղով (եւ ի՞նչ ենք արտահանելու): Այսպիսով... Առաջին հայացքից գայթակղիչ է՝ «ապաշրջափակվելու են հաղորդակցության ուղիները» արտահայտություն-խոստումը: Եվ դժվար թե որեւէ գիտակից մարդ (առաջին հայացքից) դեմ լինի ճանապարհների ապաշրջափակմանը, բայց... Ի՞նչ գնով, ի՞նչ զոհողություններով, զիջումներով, նվաստացումներով:

Արդյո՞ք որեւէ մեկը հաշվարկել է, թե ի՞նչ օգուտներ եւ ի՞նչ վնասներ կունենանք ապաշրջափակման առաջարկվող ծրագրից:

Ու առանց հաշվարկելու ու համեմատություններ անելու՝ հրճվանքի հանդեսներ ենք կազմակերպում:

Եվ առհասարակ՝ սա երեւի միակ դեպքն է համաշխարհային պատմության մեջ, որ դեպի հյուսիս՝ Ռուսաստան, գնալու համար ճանապարհ ենք բացում դեպի հարավ ու հպարտանում... Ահա այսպիսի իրավիճակում ենք հայտնվել 2020 թ. նոյեմբերի 9-ի եւ 2021 թ. հունվարի 11-ի եռակողմ հայտարարություններից հետո: Ի՞նչ անել...

Նախ՝ բոլոր սպառնալիքներով ու դժվարություններով հանդերձ, կուզենայինք բարձրաձայնել՝ հավատում ենք մեր վաղվա օրվան, հայ ազգի ապագային: Եվ դա հազարավոր սյունեցիների հաստատուն դիրքորոշումն է ու համոզմունքը:

Հայ ժողովուրդը դարերի ընթացքում բազմիցս է հայտնվել ծանրագույն իրավիճակներում, լինել-չլինելու սպառնալիքին դեմ հանդիման, բայց ելք է գտել... Հիմա էլ պարտավոր ենք ելք գտնել, ինչի վերաբերյալ տարբեր (եւ միմյանց լրացնող) տեսակետներ ենք լսում: Այդ ամենի մեջ, բարեբախտաբար, մի ընդհանրական տեսակետ կա՝ մենք պետք է լինենք, Հայաստանի Հանրապետությունը պետք է լինի, որի ողնաշարը Սյունիքն է եւ միայն Սյունիքը...

Իսկ լինելու համար, նախելառաջ, պետք է կանգնեցնենք գահավիժումն ու շարունակվող ողբերգությունը, որ ապրում է հայ ազգն ու հայոց պետականությունն ամեն օր:

Պարտավոր ենք հիշել հայոց հանճարի բանաձևեր՝ «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» եւ առաջնորդվել դրանով:

Հ.Գ.

Պատմությունը, ժամանակը Նիկոլին ու նրա գլխավորած կառավարությանն (անկախ մեր կամքից) լուսանցք են նետել... Եվ միայն մոլորվածները կամ ողորմելիներն են ծամծմում «հանրային պահանջ», «կրիտիկական զանգված» արտահայտությունները: ...Գիտակցենք պարզագույն ճշմարտությունը՝ պատմության վճիռը բարձր է «հանրային պահանջ» շինծու արտահայտությունից: Պատմության վճիռը նույնիսկ վեր է «ժողովուրդ» ամենագոր արտահայտությունից, որը սովորաբար իշխանության լեզվի միջոցով աղբյուրն է: Եվ անկախ մեր սիրել-չսիրելուց, անկախ արտահերթ ընտրություններ անել-չանելուց, անկախ այն բանից, թե որքան ժամանակ Նիկոլը կմնա կառավարության շենքում, անկախ այն բանից, թե ոստիկանական հոծ շարքերն ինչպիսի ջանասիրությամբ ու որքան ժամանակ կպաշտպանեն կառավարության շենքը՝ միեւնույն է՝ կա ստույգ իրողություն՝ պատմությունը Նիկոլին ու նրա կառավարությանն անդառնալիորեն կողք է դրել...

Ավելին, տպավորություն ունենք, որ երկիրն արտաքին կառավարման է հանձնված, որ երկրի՝ դեռեւս իրենց գրասենյակներում գտնվող կառավարիչները Հայաստանի շուրջ տեղի ունեցող զարգացումների մասին տեղեկանում են մամուլից, ինչը, օրինակ, խոստովանեց նախագահ կոչվող Արմեն Սարգսյանը: Այդ տպավորությունն ամեն օր ամրապնդում է Ազգային ժողովը, որն իր օրակարգային հարցերով հայոց իրականության եւ հատկապես հայոց ողբերգության հետ առերեսվելու որեւէ նշան ցույց չի տալիս: Խորհրդարանը նույնիսկ չի համարձակվում ստեղծել անկախ քննիչ հանձնաժողով՝ մեր ազգային ողբերգության ընթացքում ծագած բազմաթիվ հարցերի ու տարակույսների պատասխանը գտնելու համար: Ու եթե ստեղծված վիճակը շարունակվի, ապա ինքը՝ ժամանակը, նոր վճիռներ կկայացնի, որոնք, Աստված մի արասցե, կարող են եւ ավելի ճակատագրական լինել հայոց համար...

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/sisakan-ashkharhi-mekhri-annvach-amrotsy-e%D6%82-haravayin-darpasy-serundneri-aryamb-darerov-pashtpanvats-u-srbagortsvats-turqi-kokhan-dardznelu-pordz-e-arvum>

17.02.2021

Կապան համայնքի գյուղերի անմիջական հարևանությամբ գտնվող աղբբեջանական զինված ծառայողների արձակած կրակոցները պարբերական են. ՀՀ ՄԻՊ

Սյունիքի մարզի Կապան քաղաք, Ներքին Հանդ, Շիկահող, Սրաշեն գյուղեր ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գլխավորած աշխատանքային խմբի 2021թ. փետրվարի 16-ի այցը վեր հանեց բնակիչների կյանքի, սեփականության ու կենսական կարևորության այլ իրավունքների վտանգներ կամ խախտումներ:

Այցը տեղի ունեցավ Կապանի համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի, համայնքային այլ իրավասու ներկայացուցիչների ուղեկցությամբ: Այցի ընթացքում իրականացվեցին մանրամասն քննարկումներ, այդ թվում՝ առանձնագրույցներ բնակիչների հետ, արվեցին մասնագիտական դիտարկումներ, անհատական մոտեցմամբ դիմումների ու բողոքների ուսումնասիրություններ:

Այցի արդյունքերով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ՝

1) Կապան համայնքի գյուղերի անմիջական հարևանությամբ գտնվող աղբբեջանական զինված ծառայողները արձակում են կրակոցներ մանր ու խոշոր տրամաչափի զինատեսակներից: Կրակոցները պարբերական են, արվում են ինչպես ցերեկային, այնպես էլ գիշերային ժամերի, պարզ լսվում են գյուղերում ու առաջացնում անհանգստություն, առաջին հերթին՝ կանանց ու երեխաների համար: Կապան համայնքի գյուղերում աղբբեջանական կրակոցների ապացույց Մարդու իրավունքների պաշտպանն արդեն հրապարակել է:

Այցի հաջորդ օրը այս նույն տեղեկությունները Պաշտպանի աշխատակազմի Սյունիքի մարզային ստորաբաժանմանը հաստատել են նաև Ծավ ու Ճակատեն գյուղերի բնակիչերը.

2) 2020թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների պատերազմի հետևանքով Աղբբեջանի հետ ՀՀ սահմանների «որոշման» գործընթացի պատճառով Կապանի նշված գյուղերի արոտավայրերը, մասնավոր ու համայնքապատկան վարելահողերը հայտնվել են աղբբեջանական զինված ուժերի նշանառության ներքո: Սա անհնար է դարձրել արոտավայրերից ու վարելահողերից օգտվելը.

3) այցի ընթացքում Շիկահող, Սրաշեն ու Ներքին Հանդ գյուղերի բնակիչներն ահազանգել են, որ կրակոցներ են արձակվել այն պահին, երբ իրենք գյուղատնտեսական աշխատանքներով զբաղված են եղել իրենց պատկանող հողերում՝ իհարկե, ցերեկային ժամերի: Մի շարք դեպքերում նրանք եղել են իրենց երեխաների (նաև թոռնիկների) հետ:

Ընդ որում, կրակոցներ արձակած աղբբեջանցի զինվորականներն գտնվում են այնպիսի (անգամ 1կմ-ից քիչ) տարածության վրա, որ անգեն աչքով հայ գյուղացիների հողատարածքները դիտարկելի են: Այսինքն՝ նրանք պարզ սիտարկում

են, որ հողատարածքներում գյուղատնտեսական աշխատանքներ են իրականացնում խաղաղ բնակիչները:

Այս ամենն ուղիղ վտանգներ է ստեղծում երեխաների համար: Օրինակ՝ ադրբեջանցի զինվորականները գտնվում են Ներքին Հանդ գյուղի գործող դպրոցի անմիջական հարևանությամբ՝ 1 կմ-ից էլ քիչ հեռավորության վրա:

Այս փաստերը հաստատվել են Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի դիտարկումներով, համայնքային մարմինների ու բնակիչների ասիականներով:

4) ադրբեջանական զինված ծառայողների (այդ թվում՝ ադրբեջանական դրոշների ու ցուցանակների) առկայությունը Կապան քաղաքից ճակատեն ու Սյունիքի մարզի Կապան համայնքի այլ գյուղեր տանող ճանապարհին լրջորեն խաթարել է խաղաղ բնակիչների ու առաջին հերթին՝ գյուղացիների ազատ տեղաշարժն այդ ճանապարհով: Ըստ բնակիչների՝ ստացվում է, որ ցուցանակները կամ դրոշները բնակիչներից «պահպանելու» համար են այդ վայրերում ադրբեջանական զինված ծառայողներ առկա:

Այս ամենի պատճառով գյուղացիներն անգամ կենսական կարիքների համար (օրինակ՝ աշխատանքի կամ բժշկական հաստատություն մեկնելը կամ վերադարձը) ստիպված են ձեռնպահ մնալ երեկոյան ժամերին այդ ճանապարհով երթնեկելուց՝ իրենց ու իրենց ընտանիքների անվտանգության նկատառումներից ելնելով:

5) նկարագրվածը ևս մեկ անգամ հաստատում է, որ հայկական գյուղերի անմիջական հարևանությամբ կամ համայնքներն իրար կապող ճանապարհներին ադրբեջանցի զինված ծառայողների (նաև դրոշներ ու ցուցանակներ) առկայությունը կամ նրանց ցանկացած տեսակի տեղաշարժ, կոպտորեն ոտնահարում են բնակիչների սեփականության իրավունքը, այդ թվում՝ ապրուստի միջոց վաստակելու նրանց հնարավորությունը, լրջորեն վտանգում է նրանց կյանքի ու առողջության, ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության և կենսական կարևորության մյուս իրավունքները, որոնք երաշխավորված են միջազգայնորեն ու ՀՀ Սահմանադրությամբ:

Դա նաև խաթարում է մարդկանց, այդ թվում՝ երեխաների անվտանգությունն ու խաղաղ կյանքը:

Այս ամենը տեղի է ունեցել Հայաստանի բնակչությանն ուղղված պատերազմի և ուժի ադրբեջանական սպառնալիքների ներքո մեխանիկական մոտեցումներ կիրառելու, անթույլատրելի արագ գործընթացի պատճառով՝ առանց հանձնաժողովային մասնագիտական աշխատանքների ու սահմանային բնակիչների իրավաչափ շահերը, նրանց միջազգայնորեն երաշխավորված իրավունքները, հետևաբար՝ իրավունքի գերակայության պահանջները հաշվի առնելու:

6) Սյունիքի մարզի Կապան համայնք 2021թ. փետրվարի 16-ի այցի ընթացքում գյուղերի բնակիչների հետ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը Կապան համայնքի ղեկավարի մասնակցությամբ քննարկել է նաև հարցեր, որոնք վերաբերում են գյուղերի բնակիչների սոցիալական աջակցության, սոցիալ-

տնտեսական իրավունքների ապահովմանը: Ավանդների հատուցման գործընթացի հետ կապված հարցեր են հատուկ քննարկվել Ներքին Հանդ գյուղում:

7) այցի շրջանակներում Կապան համայնքի ղեկավարն ու համայնքային մի շարք պատասխանատուներ Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացրեցին մանրամասն տեղեկություններ ինչպես նշված, այնպես էլ Կապանի մյուս գյուղերին վերաբերող սոցիալական ոլորտի խնդիրների, նրանց կենսական պայմանների ու անվտանգության հարցերի վերաբերյալ:

Այցի արդյունքներով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ընթանում են ամփոփման աշխատանքներ, որոնց առաջարկները կներկայացվեն պետական իրավասու մարմիններին, անհրաժեշտ դեպքերում կպահանջվեն պարզաբանումներ:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/Armenianombudsman/posts/1630555660465225>

23.02.2021

«Մեր հողերը և արոտավայրերը թշնամու դիրքերին շատ մոտ են, անասունների պահելը մի քիչ դժվարացել է». Ներքին Հանդի վարչական ղեկավար

Սյունիքի մարզում տեղի ունեցած դիրքային փոփոխությունների արդյունքում, 4 տասնյակի հասնող համայնքներ դարձել են սահմանամերձ, թշնամու դիրքերն այդ բնավայրերից գտնվում են՝ 150, լավագույն դեպքում՝ 300 մետր հեռավորության վրա:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության փետրվարի 15-ին հրապարակված [ցուցակով](#) մի շարք համայնքների հետ միասին Ներքին Հանդ գյուղը նույնպես ներառվել է սահմանամերձ գյուղերի ցանկում:

[168.am](#)-ի հետ զրույցում Ներքին Հանդի վարչական ղեկավար Խաչատուր Բաղդասարյանն ասաց, որ բնակիչները նորմալ ապրում են, և այնպես չէ, որ խուճապ կա:

«Ամենամեծ խնդիրն այն է, որ մեր հողերը և արոտավայրերը սահմանին մոտ են, դրանք թշնամու դիրքերին շատ մոտ են: Այդ պատճառով էլ այս պահին անասունների պահելը մի քիչ դժվարացել է: Գարնանը, երբ գյուղատնտեսական աշխատանքները սկսվի, տեսնենք, էլի, թե ինչպես ենք կազմակերպում, որ բնակիչներն անվտանգ աշխատեն», - ասաց Խաչատուր Բաղդասարյանը:

Ըստ նրա, 1990-ականներից հետո Ներքին Հանդը սահմանամերձ չի եղել, նոյեմբերի 9-ի եռակողմ փաստաթղթի ստորագրումից հետո և Սյունիքում դրան հետևած իրադարձությունների համատեքստում գյուղը դարձավ սահմանամերձ:

«Թշնամին մեր գյուղից 150-300 մետր հեռավորության վրա է: Նրանց վերահսկողության տակ մեր մշակովի հողերից չի մնացել, բայց շատ է մոտեցել դրանց: Հիմա որ ասեմ՝ խնդիր կա, չէ, որովհետև դեռևս գյուղատնտեսական աշխատանքները չենք սկսել: Դաշտ չենք գնացել, որ ասեմ՝ կրակոց կա, բան կա: Դե, չնայած, առանց դրա էլ վտանգը կա, այնպես չէ, որ չկա, թշնամուց ամեն ինչ սպասելի է: Գարունը բացվի, կտեսնենք, էլի», - հավելեց մեր զրուցակիցը:

Ներքին Հանդի վարչական ղեկավարը նաև տեղեկացրեց, որ գյուղից այլ գյուղեր գնալիս ճանապարհին անվտանգ է, սակայն մարզկենտրոն՝ Կապան հասնելն է դժվարացել, քանի որ անցնում են անմիջապես թշնամու հսկողության տակ հայտնված ճանապարհով:

«Կողքի գյուղեր գնում ենք, բայց մարզկենտրոն գնալիս՝ անմիջապես իրենց մոտով ենք գնում, մեր սահմանապահն ու ռուսը կանգնած են: Թուրքը կանգնած է Կապան-Ճակատեն ճանապարհին», - նշեց Խաչատուր Բաղդասարյանը՝ հույս հայտնելով, որ կհաջողվի ապահովել բնակիչների անվտանգությունը:

Աղբյուրը՝ <https://168.am/2021/02/22/1467018.html>

24.02.2021

Սյունիքի մարզպետ Մելիքսեթ Պողոսյանն այսօր ընդունել է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հայաստանյան պատվիրակության ներկայացուցիչներին

Սյունիքի մարզպետ Մելիքսեթ Պողոսյանն այսօր ընդունել է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հայաստանյան պատվիրակության ներկայացուցիչներին, Գորիսում գործող ենթապատվիրակության ղեկավար Պիեռ-Էմանուել Դյուկրուեին, Հայկական կարմիր խաչի ընկերության անդամներին, ընկերության գլխավոր քարտուղար

Աննա Եղիազարյանին, Սյունիքի մարզային մասնաճյուղի աշխատակիցներին:

Հանդիպման ընթացքում հյուրերը ներկայացրել են կազմակերպության կողմից մարզում մինչ այժմ իրականացված մարդասիրական առաքելությունը, հատկապես 2020-ին՝ համաճարակային իրավիճակում ու պատերազմական, հետպատերազմյան ժամանակաշրջանում կատարած աշխատանքը:

Քանի որ այժմ միջազգային կոմիտեի հայաստանյան պատվիրակությունը գրասենյակներ է բացում նաև մարզերում, ներկայացնելով իրենց գործունեության ռազմավարական ուղղություններն ու առաջիկա անելիքները՝ Կարմիր խաչի ներկայացուցիչները նաև ցանկանում էին մարզային իշխանություններից լսել առաջարկներ, թե հատկապես ինչի կարիք կա մարզում ու ի՞նչ ուղղություններով է ճիշտ խորացնել իրենց մարդասիրական աշխատանքը Սյունիքում:

Մելիքսեթ Պողոսյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին կատարած աշխատանքի համար ու սերտ համագործակցության, ամեն կերպ աջակցելու պատրաստակամություն հայտնեց:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/syuniqi-marzpet-meliqset-pokhosyann-aysor-yndunel-e-karmir-khachi-mijazgayin-komitei-hayastanyan-patvirakutyany-nerkayatsutsichnerin>

Կազմեց Ս. Ալավերդյանը